



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ՀԱՅԱՍՏԱՆ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ 2006թ. – ՕԳՈՍՏՈՍ 2007թ.

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2007թ. Ղեկտեմբեր

Այս հաշվետվությունը պատրաստվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության, Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության, ՀՀ առևտության և տնտեսական զարգացման նախարարության և Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական ծառայության ուղարկությանը ներկայացնելու նպատակով: Այն պատրաստվել է Զեսիկա Ռենոլդսի կողմից «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (ՄՄՀՀ) ծրագրի շրջանակներում:



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



**ՀԱՅԱՍՏԱՆ ՄԻԶԱՋՎԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ 2006թ. –
ՕԳՈՍՏՈՍ 2007թ.
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հաշվետվության մեջ ներկայացված տեսակետները հեղինակինն են, և պարտադիր չեն, որ արտացոլեն Միացյալ Նահանգների կառավարության կամ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	3
ՍԱԿՄԱՆՈՒՄՆԵՐ	4
1. ԱՍՓՈՓՈՒՄ	5
1.1. ՄԵԼԱՆՈՄՆԵՐԻ հԵՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....	5
1.2. ԺԱՄԱՆՈՄՆԵՐԻ հԵՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	7
2. ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ	8
3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	8
4. ՄԵԿՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	9
4.1. Այցելուների նկարագիր.....	9
4.1.1. Քաղաքացիությունը	9
4.1.2. Այցելութամ նպատակը	11
4.1.3. Հայաստանը որպես հանգստի անցկացման վայր ընտրելու պատճառները	12
4.1.4. Տարիքը և սեռը.....	13
4.1.5. Կրկնվող այցելություններ	14
4.1.6. Տեղեկատվության աղյուղներ	15
4.2. Ճամփորդական վարքագիծ.....	18
4.2.1. Ուղևորության կազմակերպումը և ամրագրումներ իմտերմետով	18
4.2.2. Կացարանը.....	20
4.2.3. Այցելության տևողությունը	23
4.2.4. Ուր են այցելել	25
4.2.5. Ձբոսաշրջիկների գիշերների բաշխումը	28
4.3. Այցելուների կողմից տրված գնահատականները	29
4.3.1. Հարմարությունների և ժառայությունների գնահատումը	29
4.3.2. Հայաստան կրկին այցելելու ցանկությունը	30
4.3.3. Հայաստանը որպես հանգստավայր խորհուրդ տալը	31
4.4. Այցելուների ծախսերը	32
4.4.1. Մեկ անձին ընկնող միջին ծախսերը և օրական ծախսերը օրական ծախսերը	32
4.4.2. Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպած գրոսաշրջիկների միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների	38
5. ԺԱՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	42
5.1. Այցելուների նկարագիր	42
5.1.1. Քաղաքացիության երկիրը	42
5.1.2. Այցելութամ երկիրը	43
5.1.3. Տարիքը և սեռը	44
5.2. Ճամփորդական վարքագիծ օրինակներ	45
5.2.1. Ուղևորության կազմակերպումը	45
5.2.2. Կացարան.....	45
5.2.3. Այցելության տևողությունը	46
5.3. Այցելուների ծախսերը	47
5.3.1. Մեկ շնչի հաշվով միջին ծախսերը և օրական ծախսերը	47
5.3.2. Միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների	51
5.3.3. Ուղևորության ֆինանսավորումը	54
5.3.4. Ստացվող եկամուտը	56
6. ԴԻՏԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	57
ՀԱՎԵՏՎԱԾ Ա. ՄԵԿՆՈՂԻ ՀԱՐՑՈՒՄ	59
ՀԱՎԵՏՎԱԾ Բ. ԺԱՄԱՆՈՂԻ ՀԱՐՑՈՒՄ	63

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

ԱՊՀ Երկրներ՝ ներառում է «այլ ԱՊՀ Երկրներ», Ռուսաստան և Վրաստան,

Հանգստի նպատակով ժամանածներ՝ արձակուրդների, հանգստի կամ ժամանցի նպատակով այցելած զբոսաշրջիկներ,

Հանգստի/ժամանցի նպատակով ժամանած այցելուներ/զբոսաշրջիկներ՝ արձակուրդների նպատակով ժամանածներ, Միջին Արևելք՝ ընդգրկում է Սիրիան, Լիբանանը և Պարսկաստանը, Հյուսիսային Ամերիկա՝ ԱՄՆ-ն և Կանադան,

Այլ ԱՊՀ Երկրներ՝ Աղբեջան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա,

Արևմտյան Եվրոպայի այլ Երկրներ՝ Անդորրա, Ավստրիա, Բելգիա, Շանհայ, Ֆինլանդիա, Իռլանդիա, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Մալթա, Հոլանդիա, Նորվեգիա, Պորտուգալիա, Իսպանիա, Շվեյցարիա և Շվեդիա,

Զբոսաշրջիկներ՝ այն մարդիկ, ովքեր «ուղևորվում իրենց սովորական միջավայրից դուրս գտնվող վայրեր և հանգրվանում են այնտեղ ավելի քան մեկ անընդմեջ տարի ժամանակահատվածով հանգստի, բիզնեսի և այլ նպատակներով, որոնք կապված չեն այցելության վայրում փոխհատուցման ենթակա գործունեության հետ»,

Ճանապարհորդողներ/Ճանփորդողներ՝ զբոսաշրջիկներ,

Այցելուներ՝ զբոսաշրջիկներ, չնայած ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության պաշտոնական սահմանումն այլ է,

Արևմտյան Եվրոպա՝ Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա և «Արևմտյան Եվրոպայի այլ Երկրներ»:

1. ԱՄՓՈՓՈՒՄ

1.1. ՄԵԿՆՈՒՄՆԵՐԻ հԵՏԱԳՈՒԹՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿՆՈՒՄՆԵՐԻ հԵՏԱԳՈՒԹՈՒԹՅՈՒՆ իրականացվել է Հայաստան այցելող օտարերկոյա գրոսաշրջիկների վարքագիծն ուսումնասիրելու նպատակով: Այցելուների նկարագրից երևում է, որ գրոսաշրջիկները, մեծամասամբ, ժամանում են Ոուսաստանից, Վրաստանից, ԱՊՀ այլ երկրներից և Իրանից, որոնց հաջորդում են Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրները: Ազնիայտ է, որ գրոսաշրջիկների ընդհանուր քանակում մեծ է հայկական ծագում ունեցող գրոսաշրջիկների մասնաբաժնը, այդ իսկ պատճառով տրամաբանական է, որ այցելությունն ընկերներին և հարազատներին նշվել է, որպես Հայաստան կատարած ուղևորությունների հիմնական նպատակ:

Ընկերներին և հարազատներին այցելությունից հետո մյուս առավել նշանակալի նպատակներ են նշվել գործնական և հանգստի/ժամանցի նպատակով կատարված այցելությունները: Հանգստի նպատակով այցելած գրոսաշրջիկները մեծամասամբ ժամանել են Հյուսիսային Ամերիկայից, Արևմտյան Եվրոպայից, Ճապոնիայից և Միջին Արևելքից, մինչդեռ Ոուսաստանի և ԱՊՀ երկրների դեպքում այս նպատակով այցելող գրոսաշրջիկները փոքրաթիվ են: Պատասխանողների կողմից հանգստի կամ ժամանցի անցկացման նպատակով Հայաստանը որպես գրոսաշրջային ուղղություն ընտրելու հիմնական պատճառներ են նշվել երկրի բնությունը և պատմամշակութային վայրերը, ինչև շուկայում նշանակալի դեր են ունեցել նաև Հայաստանի ավանդույթները և էկոտուրիզմը կամ արկածային գրոսաշրջությունը:

Բոլոր այցելուների կտրվածքով գրոսաշրջիկների մեծամասնությունը տղամարդիկ են, բացառությամբ ընկերներին և հարազատներին այցելության եկած և բուժման նպատակով ժամանած գրոսաշրջիկների խմբերի, որտեղ այցելուների մեծամասնությունը կանայք են: Հիմնական տարիքային խումբը բաղկացած է 36-55 տարեկաններից, ինչև, այս գրոսաշրջիկների մոտ հանգստի/ժամանցի նպատակով կատարված ուղևորությունների դրույթաշափն այնքան էլ մեծ չէ: Հանգստի նպատակով կատարված այցելությունները, հիմնականում, ընկնում են 55 տարեկան և բարձր տարիքային խմբին, չնայած նրանց քանակն այդքան մեծ չէ:

Բավականին բարձր է Հայաստան մեկից ավելի այցելությունների կատարման դրույթաշափն, հատկապես հայկական ծագում ունեցողների շրջանում, իսկ մեկից ավելի անգամ Հայաստանում եղած գրոսաշրջիկների մեծ մասի ուղևորության նպատակն այցելությունն է ընկերներին և հարազատներին: Հիմնվելով այն փաստի վրա, որ Ոուսաստանից և Վրաստանից ժամանած շատ գրոսաշրջիկներ ունեն հայկական ծագում, տրամաբանական է այն, որ կրկնվող այցելությունների ամենաբարձր դրույթաշափն բաժին է ընկնում այս երկու երկրներին:

Հայաստան ժամանած գրոսաշրջիկների կողմից օգտագործված տեղեկատվության հիմնական աղբյուրներ են նշվել ընկերներն ու հարազատներին, ինչպես նաև նախորդ այցելությունները, ինչը խոսում է այն մասին, որ Հայաստանի ներկայացվածությունը գրոսաշրջության մարկետինգի այլ ուղիներով այնքան էլ մեծ չէ:

Բացի այդ, ցածր է նաև ինտերնետի օգնությամբ ուղևորության հետ կապված ամրագրումների կատարման դրույթաշափն: Այս նպատակով ինտերնետից առավելագույնս օգտվել են Մեծ Բրիտանիայի և Իտալիայի գրոսաշրջիկները, իսկ ամենաքիչը՝ Վրաստանից և Ճապոնիայից ժամանած գրոսաշրջիկները: Ինտերներն ավելի հաճախ է օգտագործվել ամրագրումների կատարման համար Հայաստան հանգստանալու նպատակովայցելած գրոսաշրջիկների կողմից գրոսաշրջիկների մյուս խմբերի համեմատ:

Ուղևորության պլանավորման նպատակով տուրօպերատորների ծառայություններից օգտվել են հիմնականում ճապոնիայից, Հյուսիսային Ամերիկայից և Արևմտյան Եվրոպայից ժամանած գրոսաշրջիկները, ինչպես նաև հանգստի նպատակով ժամանածները: Բացի այդ, այս խումբը (գումարած իրանը) նաև ավելի հակված է հանգրվանել հյուրանոցներում: Մինչդեռ, Ուստաստամից և Վրաստամից ժամանած գրոսաշրջիկների մեծ մասը հանգրվանում է ընկերների և հարազատների տանը, նոյնը կարելի է ասել նաև ընկերներին ու հարազատներին այցելության նպատակով ժամանած, ինչպես նաև հայկական ծագում ունեցող գրոսաշրջիկների համար:

Այցելության ամենաերկար ժամանակահատվածն ընկնում է աշխատանքի, կրթության, բուժման և ընկերներին ու հարազատներին այցելության, իսկ ամենակարճը՝ հանգստի և բիզնեսի նպատակով ժամանած գրոսաշրջիկներին: Գրոսաշրջիկների մեծ մասի այցելության տևողությունն է 4-7 գիշեր, որին հաջորդում է 22 և ավելի գիշեր պատասխանը: Ուստաստամից ժամանածների ուղևորության տևողությունը, հիմնականում 22 և ավելի գիշեր է, իսկ հարևան երկրների՝ Իրանի և Վրաստամից գրոսաշրջիկների դեպքում՝ 1-3 գիշեր:

Այցելությունների ամենամեծ թիվն ընկնում է Երևանին, իսկ ամենափոքը՝ Լեռնային Ղարաբաղին և Սյունիքի մարզին: Երկրի տարբեր վայրեր ավելի հաճախ այցելել են հանգստի նպատակով ժամանած գրոսաշրջիկները, ինչը զարմանալի չէ, մինչդեռ աշխատանքի նպատակով ժամանածներն ամենաքիչն են այցելել մեկից ավելի վայրեր: Հայաստանում ամենահինտենսիվ ուղևորություններն ընկնում են Կանադացիներին, ում մոտ այցելության վայրերի քանակն ամենամեծն է, իսկ Երևանի ներսում ամենափոքը քանակով ուղևորություններ կատարողները Վրաստամից և Իրանից ժամանած գրոսաշրջիկներն են:

Զբոսաշրջիկների կողմից Երկրում անցակցած գիշերների քանակի առումով առաջին տեղում Երևանն է, որին հաջորդում է Շիրակի մարզը: Ինչեւ, Շիրակի մարզ այցելող գրոսաշրջիկները, հիմնականում, ժամանել են Հայաստան ընկերներին և բարեկամներին հանդիպելու նպատակով, այդ իսկ պատճառով կացարանի վրա նրանց կատարած ծախսերը նշանակալի չեն: Բացի այդ, պարզվում է նաև, որ հայկական ծագում ունեցող և ընկերներին ու բարեկամներին այցելող գրոսաշրջիկներն ավելի քիչ ժամանակ են ծախսել Երևանում:

Հայաստանը, ընդհանուր առմամբ, գրոսաշրջիկների կողմից լավ է գնահատվել: Լավագույն գնահատականները տրվել են տեսարժան վայրերին և հանգստի գոտիներին, իսկ ամենացածր գնահատականները՝ ճանապարհներին և գների մակարդակին: Այցելուների գերակշռող մեծամասնությունն ունի կրկին Հայաստան այցելելու ցանկություն, չնայած գերմանացի և արծակուրդների անցկացման նպատակով ժամանած գրոսաշրջիկների մոտ կրկնվող այցելությունների ցանկության դրույքաչափն ավելի ցածր է, քան գրոսաշրջիկների մյուս խմբերի մոտ: Բոլոր այցելուների մեծամասնությունը նշել է, որ խորհուրդ կտա իր ընկերներին ու հարազատներին այցելել Հայաստան, իսկ Լիբանանից և Գերմանիայից ժամանած գրոսաշրջիկների դեպքում այդ դրույքաչափն ավելի ցածր է՝ ելելով հարցման պատասխաններից:

Տուր փաթեթով Հայաստան այցելող գրոսաշրջիկներն ամենաշատ են գումարներ ծախսում և ընդհանուր և օրական ծախսերի առումով: Հայաստանում իրենց այցելության ժամանակ առավելագույն գումարներ ծախսող գրոսաշրջիկները Կանադացին և Ճապոնիայից ժամանած գրոսաշրջիկներն են, իսկ նվազագույնը՝ Վրաստամից և Իրանից ժամանածները: Ինչպես նշված է հաշվետվության այլ մասերում, հայկական ծագում ունեցող և ընկերներին ու բարեկամներին հանդիպելու նպատակով ժամանակողները, ընդհանուր առմամբ, ավելի քիչ են ծախսում ավելի երկար ժամանակահատվածում: Արձակուրդների նպատակով այցելող գրոսաշրջիկները ծախսում են ամենաշատը, նրանց այդ ծախսերը կրկնապատկում են տուր փաթեթով ժամանապարհորդելու դեպքում:

Այցելուների բյուջեի մեծ մասն ընկնում է միջազգային տրանսպորտային ծախսերին, մինչդեռ կացարանների, ռեստորանների, կազմակերպված տուրերի և հուշանվերների վրա

կատարված ծախսերը մեծ չափերի չեն հասնում: Հանգստի նպատակով ժամանաձներն ավելի շատ են ծախսում միջազգային տրանսպորտի և կացարանների վրա, քանի որ նրանք, մեծամասամբ, ժամանում են հեռու երկրներից և նրանց մեջ ավելի քիչ են այն զբոսաշրջիկները, ովքեր հանգրվանում են իրենց ընկերների ու բարեկամների տանը: Նշանակալի թվեր են ստացվել «այլ ծախսեր» մասով, հատկապես Ռուսաստանից և ԱՊՀ այլ երկրներից ժամանած զբոսաշրջիկների մոտ:

1.2. Ժամանումների հետազոտություն

Ժամանումների հետազոտությունն իրականացվել է Հայաստանի բնակիչների միջազգային ուղևորությունների վարքագիծն ուսումնասիրելու նպատակով: Այդ իսկ պատճառով էլ զարմանալի չէ, որ հարցմանը մասնակցած Հայաստանի բնակիչների 97%-ն ունի Հայաստանի քաղաքացիություն: Հայաստանում բնակվող Ռուսաստանի քաղաքացիները կազմում են ընդամենը քաղաքացիների 1.5%-ը: Հայաստանի բնակիչների մեծ մասը ծանապարհորդում է Վրաստան, Ռուսաստան և Իրան, ինչը զարմանալի չէ՝ ելելով այն հանգամանքից, որ Վրաստանը և Իրանն ուղղակիորեն սահմանակցում են Հայաստանին, իսկ Ռուսաստանում կա մեծ սիյուռք:

Արտագնա զբոսաշրջիկների մեծամասնությունը տղամարդիկ են, բացառությամբ այն զբոսաշրջիկների, ովքեր ծանապարհորդում են ընկերներին ու բարեկամներին հանդիպելու և կրթություն ստանալու նպատակով: Զբոսաշրջիկների ամենամեծ մասնաբաժինն ընկնում է 36-55 տարիքային խմբին, վերջինիս դեպքում նաև ավելի մեծ է բիզնեսի և աշխատանքի նպատակով ծանապարհորդողների դրույթաչափը, մինչդեռ հանգստի/ժամանցի մեկնողների տարիքային խումբը 18-35 տարեկանն է, իսկ բուժման նպատակով մեկնողները պատկանում են 55 տարեկանից բարձր տարիքային խմբին:

Ճանապարհորդողների մեծ մասը չի օգտվում տուրօպերատորի ծառայություններից ուղևորության կազմակերպման նպատակով, մինչդեռ Խոսլիա և Հունաստան մեկնողներն ամենաշատն են դիմում տուրօպերատորների օգնությանը զբոսաշրջային ուղղություն հանդիսացող բոլոր երկրների մեջ: Ուղևորության նախապես պատվիրման համար տուրօպերատորներին ավելի շատ են դիմում նաև արձակուրդների նպատակով ճանապարհորդող զբոսաշրջիկները:

Արտասահմանում օգտագործվող կացարաններից ամենատարածվածը վարձակալվող բնակարաններն են: Ինչևէ, սա, հիմնականում, կապված է աշխատանքի և կրթության նպատակով ծանապարհորդողների հետ, ովքեր երկար ժամանակով են այցելում տվյալ երկիր: Վարձակալվող բնակարաններից հետո երկրորդ տեղում են ընկերների և բարեկամների բնակարանները, որպես օգտագործված կացարաններ: Հյուրանոցներին ընկնում է ամենակարճ ժամանակահատվածը, ինչը, ամենայն հավանականությամբ կապված է նրա հետ, որ բիզնեսի, սպորտային և մշակութային միջոցառումների մասնակցելու, ինչպես նաև հանգստի նպատակով ծանապարհորդողներն ավելի շատ կարծ տևողությամբ ուղևորություններ են կատարում: Ամենակարճ տևողությունն ունեն հարեւն երկրներ կատարվող (Վրաստան և Իրան) ուղևորությունները, իսկ ամենաերկարը՝ Ռուսաստան, Հունաստան և Հյուսիսային Ամերիկա կատարվողները:

Հայաստանի բնակիչների օրական առավելագույն ծախսերն ընկնում են «այլ երկրներ» կատեգորիային և Արևմտյան Եվրոպայի երկրներին, իսկ Վրաստանին, ԱՊՀ այլ երկրներին և Հունաստանին ընկնում են նվազագույն ծախսերը: Ծախսերն ավելի շատ են տուր փաթեթով ճանապարհորդողների դեպքում:

Ճապոնիա և Լիբանան այցելողների կողմից կատարված ծախսերում նշանակալի մասնաբաժինն են կազմում վաճառքի նպատակով ծեռք բերված ապրանքներին ընկնող ծախսերը, չնայած սա, հիմնականում, վերաբերվում է գործնական և «այլ» նպատակներով ճանապարհորդողներին: Բացի այդ, օրական ծախսերի ամենաբարձր դրույթաչափը ևս ընկնում է գործնական նպատակով ճանապարհորդողներին, իսկ առավելագույն ընդհա-

նուր ծախսերի առումով առաջին տեղում են բուժման նպատակով ճանապարհորդողները: Մինչ Հայաստանից մեկնելը կատարված ծախսերը, հիմնականում, վերաբերվում են միջազգային տրանսպորտին, հատկապես Հայաստանից հեռու գտնվող վայրեր ճանապարհորդող գրոսաշրջիկների դեպքում: «Այլ» ծախսեր խումքը ևս բավականին մեծ մասնաբաժին ունի մինչ ուղևորությունը կատարված ծախսերում: Այն ամենաբարձրն է ընկերներին ու բարեկամներին այցելող գրոսաշրջիկների մոտ: Բացի այդ, «Այլ» կատեգորիային է ընկնում նաև արտասահմանում կատարված ծախսերի ամենամեծ մասնաբաժինը, որը նաև հատկապես բարձր է բուժման նպատակով և ընկերներին ու բարեկամներին այցելող գրոսաշրջիկների մոտ: Արտասահմանում կատարված ծախսերում մեծ է նաև վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների դրույքաչափը:

Հարցագրույցին մասնակցած գրոսաշրջիկների մեծամասնությունն ինքն է ֆինանսվողել իր ճանապարհորդությունը, սակայն մի նշանակալի խմբի (հատկապես ընկերներին ու բարեկամներին այցելության և բուժման նպատակով մեկնած գրոսաշրջիկները) ուղևորությունը ֆինանսավորվել է ընկերների ու բարեկամների կողմից: Զբոսաշրջիկների մեծ մասն արտասահմանում որևէ եկամուտ չի ունեցել, չնայած իրան և Հունաստան այցելողների մոտ եկամուտ ստանալու դրույքաչափն ավելի բարձր է, ինչպես և աշխատանքի գործարար նպատակներով ճանապարհորդողներինը, ինչը տրամաբանական է:

2. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Այցելուների այս հետազոտության նպատակն էր հատկորոշել Հայաստան այցելող օտարերկրյա գրոսաշրջիկների նկարագիրը, վարքը, գոհացության մակարդակը և ծախսերը, ինչպես նաև արտասահմանյան երկրներ մեկնող Հայաստանի քաղաքացիների ծախսերը: Հետազոտության ճնաչչափը և հավաքագրված տվյալները հետագայում օգտակար կիմեն զբոսաշրջային սատելիտային հաշիվների ստեղծման գործընթացի համար: Վերջինս մի մոդել է, որն ուղղված է հյուրընկալող երկրներում զբոսաշրջության տնտեսական ազդեցության գնահատմանը:

Հետազոտության արդյունքում ստացված այս տվյալներն ընձեռում են կառավարության և մասնավոր հատվածի կողմից Հայաստանի զբոսաշրջության ոլորտն ավելի լավ հասկանալու և այդ ոլորտում աշխատանքների նախատեսման, ապրանքների մշակման, քաղաքականության մշակման և խթանման մեթոդների ստեղծման գործընթացին աջակցելու հնարավորություն:

Հետազոտության ճնաչչափի մշակումը և իրականացումը կատարվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ առաջի և տնտեսական զարգացման նախարարության, Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության և ԱՄՆՄՁԳ ֆինանսավորմաբ իրականացվող «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» ծրագրի համագործակցության պրյունքում:

Նմանատիպ հետազոտություն է իրականացվել 2002թ. TACIS ծրագրի աջակցությամբ:

3. ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեկնող օտարերկրյա գրոսաշրջիկների և ժամանող հայ գրոսաշրջիկների հետազոտությունը մեկնարկել է 2006թ. սեպտեմբերի 1-ին և ավարտվել 2007թ. օգոստոսի 31-ին: Հետազոտության հարցաշարը և մեթոդաբանությունը հաստատվել են ՀՀ վիճակագրական ծառայության կողմից:

Հարցագրույցներն իրականացվել են վերապատրաստում անցած 31 հարցագրուցավարների կողմից Երևանի Զվարթնոց օդանավակայանում, Գյումրիի օդանավակայանում և Բագրատաշենի, Բավրայի, Գողավանի, Այրումի ու Մեղրիի սահմանային անցման կետերում: Մեկնողների համար նախատեսված հարցաշրջերը թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, պարսկերեն, իսպաներեն և չիներեն լեզուներով:

Տվյալների հավաքագրումը, կողավորումը և դրանց հիման վրա այլուսակների կազմումը կատարվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից:

Հետազոտության ընթացքում կիրառվել է պատահական ընտրանքի սկզբունքը, իսկ հարցազրույցներն անց են կացվել ժամանող և մեկնող գրոսաշրջիկների ընդհանուր թվի մոտ 3%-ի հետ (սահմանային անցնան կետը հատող յուրաքանչյուր 33-րդ մարդ): Օգտագործված 2 հարցաշարերը կցված են սույն հաշվետվությանը: Հետազոտությունը և մեթոդաբանությունը մշակվել են ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության սահմանման «զբոսաշրջիկ» համարվող անձանց համար, չայած այս դեպքում հավաքագրված տվյալները վերաբերվում են նաև աշխատանքի նպատակով ուղևորություններին:

4. ՄԵԿՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4.1. Այցելուների նկարագիրը

4.1.1. Քաղաքացիությունը

Այլուսակ 1. քաղաքացիությունը. զբոսաշրջիկների ամենաբարձր տոկոսային հարաբերությունը

Երկիր	Զբոսաշրջիկների ընդհանուր քանակը	Ընդհամենը զբոսաշրջիկների տոկոսային հարաբերությունը	Հայկական ծագումով զբոսաշրջիկների ընդհանուր քանակը	Հայկական ծագումով զբոսաշրջիկների տոկոսային հարաբերությունը	Հայկական ծագումով զբոսաշրջիկների որպես տվյալ երկրի քաղաքացիների տոկոսային հարաբերությունը
Հայաստան	891	11.7	879	18.5	98.7
Կանադա	56	0.7	38	0.8	67.9
Ֆրանսիա	264	3.5	131	2.8	49.6
Վրաստան	2135	28.0	1457	30.7	68.3
Գերմանիա	215	2.8	50	1.1	23.3
Հունաստան	60	0.8	33	0.7	55.0
Իրան	595	7.8	178	3.8	29.9
Խոսլիա	55	0.7	5	0.1	9.1
Ճապոնիա	42	0.6	1	0.0	2.4
Լիբանան	32	0.4	28	0.6	87.5
Ուստաստանի Ֆեդերացիա	1883	24.7	1438	30.3	76.4
Սիրիայի Արաբական Հանրապետություն	89	1.2	64	1.3	71.9
Մեծ Բրիտանիա	138	1.8	35	0.7	25.4
Միացյալ Նահանգներ	336	4.4	165	3.5	49.1
Այլ ԱՊՀ երկրներ	222	2.9	114	2.4	51.4
Արևմտաեվրոպական այլ երկրներ	242	3.2	54	1.1	22.3
Բոլոր այլ երկրները	372	4.9	76	1.6	20.4
Ընդհանուր	7627	100	4746	100	62.2

* այդ թվում նաև աշխատանքի նպատակով ճանապարհորդողները

Քաղաքացիության առումով ամենամեծ թվով զբոսաշրջիկներն, ընդհանուր առնամբ, ժամանել են Ուստաստանից և ԱՊՀ երկրներից, Հյուսիսային Ամերիկայից և Միջին Արևելքից (ներառյալ Իրանը), իսկ ամենաքիչը ժամանել են Աֆրիկայի, Ասիայի և Օվկիանիայի երկր-

ներից, ինչպես նաև Լատինական Ամերիկայից: Հայաստան այցելող գրոսաշրջիկների ամենամեծ մասնաբաժնն ընկնում է Ռուսաստանին և ԱՊՀ երկրներին, այն է՝ 28% Վրաստանին, 24.7% Ռուսաստանին և 2.9% մյուս ԱՊՀ երկրներին: Հայաստան այցելող գրոսաշրջիկների 12.8%-ն ընկնում է Արևմտյան Եվրոպային (Ներառյալ Իտալիան, Ֆրանսիան, Գերմանիան և այլն), իսկ 5.1%-ը՝ Հյուսիսային Ամերիկային:

Քաղաքացիության առումով նշանակալիորեն բարձր է նաև հայերի ներկայացուցչությունը՝ 11.7%, չնայած հարկ է նշել, որ բոլոր այս հայ գրոսաշրջիկները հետազոտության իրականացնան ընթացքում բնակվում էին այլ երկրներում, իիմնականում Ռուսաստանում (85.6%) և, ավելի քիչ, ԱՄՆ-ում, Վրաստանում, Ֆրանսիայում և Գերմանիայում: Հայկական ծագումը կարևոր ասպեկտ է գրոսաշրջիկների նկարագրում, քանի որ Հայաստան այցելող գրոսաշրջիկների 62.2%-ը ծագումով հայ է:

Առկա միտումները ցույց են տալիս, որ նախկին Խորհրդային Միության երկրներից և հարևան երկրներից (և, հնարավոր է, սփյուռքահայերի մեծ համայնք ունեցող երկրներից) ժամանող գրոսաշրջիկներն ավելի հակված են այցելել Հայաստան:

Այլուսակ 2. Բնակության երկիրը. գրոսաշրջիկների ամենաբարձր տոկոսային հարաբերությունը

Երկիր	Զրոսաշրջիկների ընդհանուր քանակը	Ընդամենը զրոսաշրջիկների տոկոսային հարաբերությունը	Հայկական ծագումով գրոսաշրջիկների ընդհանուր քանակը	Հայկական ծագումով զրոսաշրջիկների տոկոսային հարաբերությունը	Հայկական ծագումով զրոսաշրջիկների որպես տվյալ երկիր քաղաքացիների տոկոսային հարաբերությունը
Կանադա	55	0.7	38	0.8	69.1
Ֆրանսիա	270	3.5	144	3.0	53.3
Վրաստան	2143	28.1	1470	31.0	68.6
Գերմանիա	222	2.9	59	1.2	26.6
Հունաստան	64	0.8	37	0.8	57.8
Իրան	592	7.8	177	3.7	29.9
Իտալիա	65	0.9	10	0.2	15.4
Ճապոնիա	40	0.5	1	0.0	2.5
Լիբանան	37	0.5	33	0.7	89.2
Ռուսաստանի Ֆեդերացիա	2660	34.9	2188	46.1	82.3
Սիրիայի Արաբական Հանրապետություն	88	1.2	63	1.3	71.6
Մեծ Բրիտանիա	145	1.9	36	0.8	24.8
Միացյալ Նահանգներ	347	4.5	186	3.9	53.6
Այլ ԱՊՀ երկրներ	235	3.1	136	2.9	57.9
ԱրևմտաԵվրոպական այլ երկրներ	231	3.0	67	1.4	29.0
Բոլոր այլ երկրները	433	5.7	101	2.1	23.3
Ընդամենը	7627	100.0	4746	100.0	62.2

Ժամանողների մոտ քիչ են տարբերություններն ըստ քաղաքացիության և բնակության երկիր: Ռուսաստանից ժամանում են ավելի մեծ թվով Ռուսաստանի բնակչներ, քան քաղաքացիներ, ինչը խոսում է Ռուսաստանում բնակվող մեծ թվով Հայաստանի քաղաքացիների մասին:

4.1.2. Այցելության նպատակը

Աղյուսակ 3. Այցելության նպատակն ըստ շուկայի (%)

Այցելության նպատակը	ԱՄ	Կամար	Տապակվ.	Պուաստան	Կրատոն	Արհ	Հուսատան	Խոտական	Մեծ	Թիունին	Ֆրանկի	Գերմանի	Արևոտական	Արևոտական՝ մասնակիությունը*	Արևոտական՝ առաջարկագիրը	Իդայանական	Սիրի	Իրան	Բարեխ երկրներ	Միջնաբնակ
Գործնական/ համաժողով	29.1	27.3	30.0	14.3	19.6	24.3	14.1	32.3	54.5	22.6	35.6	37.9	10.8	18.2	31.0	41.7	22.4			
Աշխատանք	3.2	1.8	7.5	1.5	1.0	3.4	3.1	12.3	6.2	3.0	4.1	4.0	0	1.1	37.6	4.1	4.8			
Կրթություն	0	0	0	0.3	2.9	2.1	0	0	0.7	0	2.3	0.6	5.4	13.6	4.4	3.1	1.8			
Բուժում	0	0	0	3.7	7.2	2.1	1.6	0	0	0.7	0	0.6	0	1.1	1.0	1.0	3.6			
Հանգիստ և ժամանաց	24.2	36.4	50.0	3.8	7.7	6.4	31.3	30.8	22.1	35.9	31.1	29.3	35.1	20.5	6.8	24.5	11.6			
Մասնակցու- թյուն մար- զական մշա- կութային մի- ջոցառումնե- րին	2.9	3.6	5.0	1.2	0.6	0.9	1.6	7.7	2.8	1.9	2.7	5.2	2.7	3.4	0.7	3.7	1.5			
Այցելություն հարազատ- ներին, ըն- կերներին	33.1	23.6	0	63.8	48.4	50.2	45.3	9.2	13.1	32.6	20.3	15.5	35.1	36.4	15.9	17.2	44.8			
Այլ	6.9	7.3	7.5	11.3	12.7	10.6	3.1	7.7	0.7	3.0	3.6	6.9	10.8	5.7	2.7	4.7	9.4			

*Անդորրա, Ավստրիա, Բելգիա, Դանիա, Ֆինլանդիա, Իռլանդիա, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Մալթա, Հունանդիա, Նորվեգիա, Պորտուգալիա, Իսպանիա, Շվեյցարիա, Շվեյչիա


Այցելությունն ընկերներին և հարազատներին նշվել է որպես Հայաստան կատարած ուղևորության գլխավոր նպատակ բոլոր ազգությունների կողմից՝ կազմելով 44.8%: Բացի այդ, մեծ է նաև գործնական և համաժողովներին մասնակցության նպատակով կատարվող այցելությունների տոկոսային հարաբերությունը՝ 22.4%: Հայաստան այցելու պատճառների երրորդ խումբը հանգիստ և ժամանցն են՝ կազմելով 11.6%: Այլ նպատակների շարքում նշվել են աշխատանքը (4.8%), կրթությունը (1.8%), բուժումը (3.6%), մասնակցությունը սպորտային և մշակութային միջոցառումներին (1.5%) և այլ նպատակներ կատեգորիան (4.7%):

Հանգստի և ժամանցի նպատակով այցելողների մեծամասնությունը Հյուսիսային Ամերիկայից և Արևմտյան Եվրոպայից է: Այս նպատակով ճանապարհորդողների քանակը մեծ է նաև Ճապոնիայի, Լիբանանի և Սիրիայի դեպքում: Չնայած նրան, որ գրոսաշրջիկների ամենամեծ մասնաբաժինն ընկնում է Ռուսաստանին, Վրաստանին և այլ ԱՊՀ երկրներին, այնուհետեղ այս երկրներից հանգստի նպատակով ճանապարհորդողների քանակը շատ փոքր է՝ 3.8%, 7.7% և 6.4% համապատասխանաբար, սակայն մեծ է ընկերներին ու բարեկամների այցելողների քանակը: Բացի այդ, այս երկրները հանդիսանում են բուժման նպատակով Հայաստան այցելող ամենամեծ քանակով գրոսաշրջիկներ ունեցող երկրները:

Գործնական նպատակով ժամանած գրոսաշրջիկների ամենամեծ մասնաբաժինն ընկնում է Մեծ Բրիտանիային (54.5%), ինչև աշխատանքի նպատակով ամենամեծ թվով այցելուներ ժամանել են Իրանից (37.6%): Ռւսանողների մեծամասնությունը ժամանում է Սիրիայից (13.6%) և տարածաշրջանի այլ երկրներից, որոնցից են Իրանը և Լիբանանը:

Այս տեղեկատվությունը մեկ անգամ ևս ապացուցում է այն, որ հարևան երկրները և նախկին խորհրդային երկրները լուրջ կապեր ունեն Հայաստանի հետ, ինչը պայմանավորված է կամ այդ տարիների միասնական պատմությամբ կամ ավելի պրակտիկ պատճառներով, ինչպիսին է, օրինակ, առանց վիզայի ճանապարհորդելու հնարավորությունը: Սա հատկապես վերաբերվում է աշխատանքի, կրթության և բուժման նպատակով ճանապարհորդող գրոսաշրջիկներին: Ընկերներին և հարազատներին այցելության եկող գրոսաշրջիկների նշանակալի մասնաբաժնն ընկնում է սկիզբներին, հատկապես Ռուսաստանից, Վրաստանից և այլ ԱՊՀ երկրների ժամանածների դեպքում, ինչը ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

Գծապատկեր 1. Հայկական ծագումով գրոսաշրջիկների այցելության նպատակը (%)



Հայկական ծագում ունեցող գրոսաշրջիկների շրջանում ավելի քիչ են նրանք, ովքեր այցելում են հանգստի/ժամանցի կամ գործնական նպատակներով (միայն 6.8% և 7.4% համապատասխանաբար) միջին գրոսաշրջիկի համեմատ, և, ընդհակարակը, մեծ է ընկերներին ու հարազատներին (65.6%) այցելության եկողների քանակը միջին գրոսաշրջիկի հետ համեմատ:

4.1.3. Հայաստանը որպես հանգստի անցկացման վայր ընտրելու պատճառները


Աղյուսակ 4. Հանգստի նպատակով Հայաստանն ընտրելու հիմնական պատճառներն ըստ շուկաների (%)

Հանգստի նպատակով ճանապարհորդության պատճառը	Այլ	Կանոն	Հասարակ	Տապանական	Ռուսական	Վրացական	Արևելական	Արևմտական	Եվրոպական	Ամերիկական	Հարավային	Հարավային Ասիա	Հարավային Աֆրիկա	Հարավային Ասիա	Հարավային Աֆրիկա	Հարավային Ասիա	Հարավային Աֆրիկա
Բնություն	65.4	45.0	66.7	60.6	78.0	78.6	68.4	65.0	66.7	68.1	72.1	70.7	50.0	66.7	64.7	69.4	68.6
Մշակույթ/պատմություն	67.9	55.0	66.7	39.4	39.0	50.0	73.7	65.0	66.7	84.0	77.9	62.7	41.7	50.0	38.2	72.9	59.3
Ռուսագոնագույնություն	6.4	35.0	5.6	3.2	15.1	7.1	26.3	5.0	3.3	14.9	1.5	1.3	8.3	27.8	0	4.7	8.8
Մասնագիտական շրջագայություն	3.8	5.0	5.6	4.3	8.8	21.4	10.5	0	6.7	4.3	7.4	5.3	0	11.1	0	14.1	6.8
Էկոտուրիզմ/արկածային տուրիզմ	3.8	0.0	5.6	17.0	15.1	21.4	15.8	20.0	3.3	12.8	19.1	13.3	0	11.1	8.8	10.6	12.4
Հայաստանի ավանդույթները	25.6	25.0	5.6	10.6	8.2	21.4	36.8	25.0	20.0	29.8	25.0	14.7	16.7	11.1	8.8	27.1	18.6
Այլ	9.0	45.0	5.6	20.2	6.3	14.3	5.3	0.0	6.7	1.1	2.9	6.7	50.0	16.7	17.6	5.9	9.4

Պատասխանողներն ունեին Հայաստան այցելության մի քանի պատճառներ ընտրելու հնարավորություն, ինչևէ, հարցմանը մասնակցած զբոսաշրջիկների 68.6%-ի կողմից որպես Հայաստան հանգստի նպատակով այցելության հիմնական պատճառ նշվել է բնությունը: Այլ հիմնական պատճառների շարքում նշվել է նաև պատմությունը և մշակույթը կատեգորիան՝ 59.3%-ի կողմից: Հայկական ավանդույթները (18.6%) և արկածային/էկո-տուրիզմը (12.4%) ևս նշվել են որպես այցելության պատճառներ Հայաստան ժամանած զգալի թվով զբոսաշրջիկների կողմից: Ուխտագնացությունը և մասնագիտական շրջագայությունները շուկայի նշանակալի մաս չեն հանդիսանում:

4.1.4. Տարիքը և սեռը

Գծապատկեր 2. Սեռն ըստ շուկայիների (%)



Հայաստան այցելողների մեջ գերակշռում են տղամարդիկ՝ կազմելով բոլոր այցելուների միջինում 59.9%-ը: Զբոսաշրջիկների նմանատիպ բաշխվածություն է նկատվում նաև բոլոր այն երկրների համար, որտեղից զբոսաշրջիկներ են ժամանել: Հայաստանի զբոսաշրջային ոլորտի նպատակային շատ երկրներից (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Իտալիա, Ֆրանսիա), ինչպես նաև Հայաստան ձանապարհորդող մեծ քանակով զբոսաշրջիկներ ապահովող այլ երկրներից այցելած կին և տղամարդ զբոսաշրջիկների տոկոսային հարաբերություններում նկատվում է արճվագն 20%-ի տարբերություն:

Աղյուսակ 5. Տարիքը և սեռը ըստ այցելության նպատակի (%)

Տարիքը և սեռը	Գործնական/համաժողով	Աշխատանք	Կրթություն	Բուժում	Հանգստ և ժամանց	Մասնակցություն սպորտային կամ մշակութային միջոցառումների	Այցելություն հարազատներին և ընկերներին	Այլ	Ընդամենը միջին
Տղամարդիկ	81.1	85.4	60.9	39.9	56.3	66.7	49.3	57.2	59.9
Կանայք	18.9	14.6	39.1	60.1	43.7	33.3	50.7	42.8	40.1
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100
17 կամ ցածր	0.1	0.3	6.5	0.7	0.3	0.9	2.0	0.7	1.2
18 – 35	27.6	29.9	82.6	18.5	33.8	62.4	24.5	25.4	28.0
36 – 55	63.3	62.2	7.2	56.2	46.6	24.8	54.6	57.9	55.0
56 և ավելին	9.0	7.6	3.6	24.6	19.3	12.0	18.9	16.0	15.7
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100
Միջին տարիք	41.1	40.4	27.9	45.0	41.4	34.7	42.6	42.4	41.7

Չնայած կանայք կազմում են գրոսաշրջիկների ընդամենը 40.1%-ը, այնուհանդեռձ, նրանք մի փոքր գերակշռութ են ընկերներին ու հարազատներին այցելության եկած գրոսաշրջիկների խմբում, իսկ բուժման նպատակով այցելողների խմբում նրանց քանակը շատ ավելի մեծ է տղամարդկանց համեմատ (60.1%): Գործնական նպատակով այցելողների գերակշռող մասը տղամարդիկ են (81.1%):


Հյայստան այցելողների հիմնական տարիքային խումբը 36-55 տարեկան գրոսաշրջիկներն են՝ կազմելով գրոսաշրջիկների 55%-ը: Նրանց մոտ նաև ավելի բարձր է գործնական կամ աշխատանքի, բուժման, ինչպես նաև ընկերներին ու հարազատներին այցելության նպատակով ուղևորությունների դրույքափակը: 18-35 տարիքային խմբին պատկանող այցելուները կազմում են բոլոր գրոսաշրջիկների 28%-ը: Այս խմբում ավելի մեծ է կրթության ու սպորտային և մշակութային միջոցառումների մասնակցության նպատակով այցելածների թվաքանակը մյուս խմբերի համեմատ: 55 և ավելի տարիքային խմբում ընդգրկված այցելուները կազմում են բոլոր գրոսաշրջիկների ընդամենը 15.7%-ը: Նրանց այցելության հիմնական նպատակներն են բուժումը, հանգիստը, ժամանցը և այցելություններին ու հարազատներին:

Հայկական ծագում ունեցող զբոսաշրջիկների մոտ տարիքային կամ սեռային բաշխվածության նշանակալի տարրերություններ չկան:

4.1.5. Կրկնվող այցելություններ

Աղյուսակ 6. Կրկնվող այցելություններն ըստ շուկաների (%)

Գժապատկեր 3. Կրկնվող այցելությունները հայկական ծագումով զբուաշրջիկմերի կտրվածքով (%)



Հստակ է, որ Հայաստանը մի երկիր է, որը կրկին այցելու ցանկություն է առաջացնում, քանի որ բոլոր գրոսաշրջիկների 52.7%-ը և հայկական ծագում ունեցողների 66.2%-ը նշել են, որ այցելել են Հայաստան 3 կամ ավելի անգամ: Կրկնվող այցելությունների մեջ մասն ընկնում է այն երկրներին, որոնք ամենամոտն են տեղակայված Հայաստանին: Երեք և ավելի այցելությունների ամենաբարձր դրույթաչափերն ունեն Ողուսատանը, Վրաստանը և Իրանը (55%-ից ավելի):

Բավականին մեծ է նաև Հայաստան առաջին անգամ այցելող գրոսաշրջիկների թվաքանակը, այն է՝ բոլոր գրոսաշրջիկների 20%-ը, չնայած սա չի վերաբերվում հայկական ծագումով գրոսաշրջիկներին, որոնցից ընդամենը 8%-ն էր առաջին անգամ այցելում Հայաստան: Հայաստան առաջին այցելությունը կատարող գրոսաշրջիկների ամենամեծ մասնաբաժինն ընկնում է Արևմտյան Եվրոպային և Հյուսիսային Ամերիկային՝ կազմելով բոլոր գրոսաշրջիկների 35-50%-ը: Այս դրույթաչափը նաև ցածր է հայկական ծագումով գրոսաշրջիկների մոտ:

Աղյուսակ 7. Կրկնվող այցելություններն ըստ այցելության նպատակի (%)

Նախորդ այցելությունների քանակը	Գործնական/համաժողով	Աշխատանք	Կորություն	Բուժում	Հանգիստ և ժամանց	Մասնակցություն սպորտային կամ մշակութային միջոցառումների	Այցելություն հարազատներին և ընկերներին	Այլ	Ընդամենը միջին
Չկա	26.3	20.7	9.7	15.1	54.6	43.1	8.7	15.4	20.0
1 նախորդ այցելություն	14.4	5.4	7.5	9.6	17.7	16.4	6.5	9.1	10.0
2 նախորդ այցելություններ	19.3	13.6	11.2	20.7	12.0	14.7	17.5	20.3	17.3
3 և ավելի նախորդ այցելություններ	40.1	60.3	71.6	54.6	15.8	25.9	67.3	55.2	52.7
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100

Հայաստան կրկնվող այցելությունների (3 կամ ավելի) ամենատարածված պատճառներ են այցելությունն ընկերներին ու հարազատներին (67.3%), աշխատանքը (60.3%), կրօնությունը (71.6%), և բուժումը (54.6%), իսկ առաջին անգամ Հայաստան այցելող գրոսաշրջիկների կողմից որպես հիմնական պատճառներ նշվել են հանգիստը/ժամանցը (54.6%) կամ մասնակցությունը սպորտային և մշակութային միջոցառումներին (43.1%): Հայաստան կրկնվող այցելությունների դրույթաչափն ավելի բարձր է հայկական ծագում ունեցող գրոսաշրջիկների մոտ միջին գրոսաշրջիկի համեմատ անկախ այցելության նպատակից, մյուս մասերով այս խմբում նշանակալի տարբերություններ չկան:

4.1.6. Տեղեկատվության աղբյուրներ

Աղյուսակ 8. Տեղեկատվության աղբյուրներն ըստ շուկաների (%)

Տեղեկատվության աղբյուրը	ԱՌ	Կանադա	Ճապոնիա	Ռուսաստան	Վրաստան	ՀՀ Հանրապետություն	Հայաստան	Մասնակիություն	Ֆրանսիա	Գերմանիա	Արևելյան Եվրոպա	Լիբանան	Միջազգային	Իրան	Բրունաւուն	Հնդկաստան
Ընկերներ և հարազատներ	50.1	59.6	8.1	64.1	54.0	55.7	50.8	34.4	31.4	49.4	35.3	31.3	38.2	62.4	32.5	32.3 52.4
Նախկին այցելություններ	28.4	15.4	27.0	31.7	43.4	31.3	23.8	23.0	29.2	24.5	26.0	23.7	38.2	23.5	61.1	34.1 36.1
Տուր օպերատոր/տուր գործակալ	2.7	0	5.4	0.2	0.1	0.4	1.6	8.2	0.7	4.2	3.7	8.0	5.9	1.2	0.4	5.0 1.2
Թերթեր	2.1	0	0	0.2	1.0	1.7	0	0	1.5	0	3.3	1.6	0	0	0.5	2.1 0.8


Տեղեկատվության աղբյուրը	ԱԾ	Կանոպ	Պարագա	Դաստիարական	Ոլուսատիկ	Վրաստան	Այլ	Հրամատան	Խուզիս	Մեծ	Ժիշտանդական	Ֆրանհիս	Գերանիս	Արևոտան Եվրոպական երկրներ	Լիքանաց	Սիրիա	Հրան	Հրան	Արդյունական պարագաներ	Արդյունական պարագաներ
Ճանապարհորդական ուղեցույցներ	4.8	0	27.0	0.4	0.1	0.9	6.3	9.8	5.8	5.0	6.0	9.6	3	2.4	0.2	6.3	1.9			
Ուղիոն/հեռուստատեսություն	1.5	3.8	10.8	1.2	1.2	3.0	7.9	3.3	2.2	7.3	9.3	10.8	0	3.5	2.5	6.6	2.6			
Ինտերնետ	1.8	0	2.7	0.3	0.1	0.9	0	3.3	3.6	2.7	5.1	4.8	0	0	0.4	2.4	0.9			
Ճանապարհորդական ամսագրեր	0	0	5.4	0	0	0	0	0	0	0	0.9	1.2	0	0	0	0.5	0.1			
Այլ	12.2	23.1	18.9	4.8	1.2	9.1	9.5	19.7	29.9	9.2	13.5	17.7	14.7	9.4	5.3	14.6	6.6			
Ընդամենը	103.6	101.9	105.3	102.9	101.1	103.0	99.9	101.7	104.3	102.3	103.1	108.7	100	102.4	102.9	103.9	102.6			

Պատասխանողներին ընձեռված էր տեղեկատվության մի քանի աղբյուր նշելու հնարավորություն: Հայաստանի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրներ են նշվել ընկերներն ու հարազատները և նախկինում կատարած այցելությունները: Միայն նշված երկու աղբյուրները միասին օգտագործվել են հավաքագրված տվյալների ավելի քան 80%-ի ձեռք բերման համաչ (միջինում 52.4%-ը նշել էր ընկերներին ու հարազատներին, իսկ 36.1%-ը՝ նախկին այցելությունները) բոլոր երկրների համար: Այս թիվն ավելի մեծ է և հասնում է 90%-ի հայկական ծագում ունեցող գրոսաշրջիկների դեպքում:

Այս տվյալները խոսում են մարկետինգի ավանդական ուղիներով՝ ճանապարհորդական լրագրերում, տուր օպերատորների մոտ և ճանապարհորդական ուղեցույցներում, Հայաստանի ոչ բավարար ներկայացվածության մասին: Չքոսաշրջիկներ ապահովող շուկաներից մարկետինգի ավանդական ուղիներից որպես տեղեկատվության աղբյուրից օգտվելու ամենամեծ դրույքաչափն ընկնում է ճապոնիային (5.4%-ը նշում է տուր օպերատորներին, 27%-ը՝ ճանապարհորդական ուղեցույցները, 10.8%-ը՝ ռադիոն/հեռուստատեսությունը, իսկ 5.4%-ը՝ ճանապարհորդական ամսագրերը): Ինչևէ, հարկ է նշել, որ ճապոնիան նշանակալի թվով հայկական ծագումով բնակչություն չունի: Ուղեցույցների, տուր օպերատորների ծառայությունների և ռադիոն/հեռուստատեսության օգտագործման դրույքաչափը մի փոքր ավելի բարձր է նաև Հունաստանի և Արևելյան Եվրոպայի երկրների համար մյուս երկրների համեմատ: Հետաքրքրական է այն, որ բավականին մեծ թիվ է կազմում տեղեկատվության «այլ» աղբյուրներ պատասխանը՝ հասնելով 10-20%-ի մի քանի երկրների համար, որոնցից են ԱՄՆ-ն, Կանադան, Ճապոնիան, Իտալիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Արևմտյան Եվրոպայի այլ երկրները և Լիբանանը:

Ինտերնետը չի օգտագործվել որպես Հայաստանի մասին տեղեկատվության հիմնական աղբյուր:


Գծապատկեր 4. Տեղեկատվության աղբյուրներն ըստ այցելության նպատակի (%)



Ընկերներ և հարազատներ պատասխանը որպես տեղեկատվության ստացման աղբյուր (22%) ամենաքիչն է նշվել գործնական նպատակով ձանապարհորդող գրոսաշրջիկներն կողմից մինչդեռ այս կատեգորիան որպես տեղեկատվության ստացման աղբյուր ավելի շատ նշվել է այն գրոսաշրջիկների կողմից, ում այցելության նպատակը հարազատներին և ընկերներին հանդիպելն է: Աշխատանքի և հանգստի/ժամանցի նպատակով ձանապարհորդողները ևս այնքան էլ հաճախ չեն նշել ընկերներին և հարազատներին որպես տեղեկատվության աղբյուր՝ 24.6 % և 34.5 % համապատասխանաբար:

Հանգստի/ժամանցի նպատակով ձանապարհորդող գրոսաշրջիկներն ամենաշատ են օգտվել տուր օպերատորների ծառայություններից (9.0%), ձանապարհորդական ուղեցույցներից (9.2%) և ռադիոյից/հեռուստատեսությունից (11.7 %) տեղեկատվություն ստանալու համար:

Գծապատկեր 5. Ընկերները և հարազատները որպես տեղեկատվության ստացման աղբյուր (%)




Ընդհանուր առնամբ ընկերները և հարազատները որպես տեղեկատվության ստացման աղբյուր օգտագործվել են հայկական ծագումով գրոսաշրջիկների կողմից՝ 67.3 %, ինչը հատկապես վերաբերվում է գործնական և որևէ համաժողովին մասնակցության (47 %) և աշխատանքի նպատակով ժամանաձներին (54.7%): Այս առումով բավականին նշանակալի տարրերություն է նպատվում հայկական ծագումով այցելուների և միջին գրոսաշրջիկի միջև:

Հետազոտության շրջանակներում պատասխանողներն ունեին տեղեկատվության կոնկրետ աղբյուրներ նշելու հնարավորություն: Նրանց կողմից նշվել են մի քանի վեր կայքեր, որոնցից ամենից հաճախ նշվել են www.armeniainfo.am, www.google.am, www.google.com և www.yahoo.com կայքերը: Ճանապարհորդական լրագրերի շարքում ամենից հաճախ նշվել է «Նեյշընը Զինգրեֆիկ»-ը (National Geographic), իսկ տեղեկատվության «այլ» աղբյուրներ պատասխանի տակ, հիմնականում, նշվել են կազմակերպություններ կամ Հայաստանի որպես հարցաշարին պատասխանողի հայրենի երկրի մասին ունեցած տեղեկությունները:

4.2. Ճամփորդական վարքագիծը

4.2.1. Ուղևորության կազմակերպումը և ամրագրումներ ինտերնետով

Գծապատկեր 6. Ուղևորության նպատակով ինտերնետով միջինում կատարվող գնումները (%)



Հայաստան այցելող գրոսաշրջիկների գերակշռող մեծամասնության կողմից ինտերնետը չի օգտագործվում ուղևորության համար ամրագրումներ կատարելու նպատակով: Սա վերաբերվում է բոլոր երկրներին, չնայած ինտերնետը ամրագրումների նպատակով օգտագործած գրոսաշրջիկների ամենամեծ մասնաբաժինն ընկնում է Մեծ Բրիտանիային՝ 8.5%, որին հաջորդում է Իտալիան իր 6.2%-ով: Ինտերնետը ամրագրումների կատարման նպատակով չի օգտագործվել Վրաստանից և Ճապոնիայից ժամանած գրոսաշրջիկների կողմից:

Հայկական ծագումով գրոսաշրջիկները նշանակալի ազդեցություն չեն ունեցել ուղևորության համար ինտերնետի օգնությամբ ամրագրումների կատարման դրույքավի վրա:

Գծապատկեր 7. Ուղևորության նպատակով կատարված գնումներն ինտերնետի օգնությամբ ըստ այցելության նպատակի (%)

Զբոսաշրջիկների ըստ այցելության նպատակի բաժանված խմբերի միջև չկան նշանակալի տարրերություններ ամրագրումները ինտերնետի օգնությամբ կամ այլ եղանակներով կատարելու առումով: Հանգստի/ժամանցի նպատակով ժամանած գրոսաշրջիկներն ավելի են հակված օգտվել ինտերնետից՝ 2.3%, ինչը հաստատում է այն վարկածը, որ ինտերնետով ամրագրումների ցածր դրույքաչափի պատճառներից մեկը տուր օպերատորների ծառայություններից օգտվողների մեծ քանակն է: Հարցման ընթացքում պատասխանողներին խնդրել են նաև նշել այն վեր կայքերը, որոնց օգնությամբ կատարվել են ավիա-

տոնսերի և հյուրանոցների հետ կապված ամրագրումներ: Հյուրանոցների շարքում առավել հաճախ նշվել է Երևանի Արմենիա Մարիոթ հյուրանոցը: Եվրոպա հյուրանոցը հաջորդ միակ հյուրանոցն է, որը նշվել է ավելի քան մեկ անգամ: Պատասխանողների կողմից ավելի քան մեկ անգամ նշվել են ավիատոնների ամրագրման համար օգտագործված հետևյալ վերկայքերը: «Բրիտիշ Էրություն» (British Airways), «Օսրիան Էրություն» (Austrian Airways), «Չեխ Էրություն» (Czech Airlines), «Արմավիա», «Լուֆթանզա» (Lufthansa) և «Թրեվելուսիթի» (Travelocity) ընկերությունների վերկայքերը:

Աղյուսակ 9. Ուղևորության կազմակերպումն ըստ շուկաների (%)

Ուղևորության կազմակերպումը	ԱՄ	Կանու	Ճանահա	Ռուսաստան	Վրաստան	ԱՐՀ	Հունաստան	Հայաստան	Մաս	ՄԵԾ ԳՐԻՆԻ	Ֆրանսիա	Գերմանիա	Ավստրիայի Եվրոպական բնակչություն	Իրանասի	Պրատիկ	Իրան	Մաս	Ռուսաստան	Եվրոպական երկինքնություն	Ընդունված միջնա
Տուր օպերատոր	7.2	9.1	10.5	0.1	0	0	1.6	7.7	4.9	9.7	7.7	7.7	7.7	0	2.4	0.5	7.9	2.0		
Ինքնուրույն/կազմակերպության կողմից	92.8	90.9	89.5	99.9	100.0	100.0	98.4	92.3	95.1	90.3	92.3	92.3	100.0	97.6	99.5	92.1	98.0			


Աղյուսակ 10. Ուղևորության կազմակերպումն ըստ շուկաների հայկական ծագում ունեցող գրուաշրջիկների համար (%)

Ուղևորության կազմակերպումը	ԱՄ	Կանու	Ճանահա	Ռուսաստան	Վրաստան	ԱՐՀ	Հունաստան	Հայաստան	ՄԵԾ ԳՐԻՆԻ	Ֆրանսիա	Գերմանիա	Ավստրիայի Եվրոպական բնակչություն	Իրանասի	Պրատիկ	Իրան	Մաս	Ռուսաստան	Եվրոպական երկինքնություն	Ընդունված միջնա
Տուր օպերատոր	6.5	13.2	0	0	0	0	0	2.8	3.5	1.7	0	0	0	1.6	1.1	0	0.6		
Ինքնուրույն/կազմակերպության կողմից	93.5	86.8	100.0	100.0	100.0	100.0	100.0	97.2	96.5	98.3	100.0	100.0	98.4	98.9	100.0	99.4			

Չնայած բոլոր երկրներից այցելած գրուաշրջիկների մեծամասնությունն ինքնուրույն կամ իրենց ընկերությունների օգնությամբ են կազմակերպել ուղևորությունը, այնուհանդեռ կան որոշ տարբերություններ գրուաշրջիկներ ապահովող շուկաների միջև: Հյուսիսային Ամերիկայի, Ճապոնիայի և Արևմտյան Եվրոպայի երկրների գրուաշրջիկներն ավելի շատ են օգտվել տուր օպերատորների ծառայություններից, քան Ռուսաստանից, ԱՐՀ կամ Միջին Արևելքի երկրներից ժամանած գրուաշրջիկները: Տուր օպերատորների ծառայություններից օգտվելու ամենաբարձր դրույթաչափն ընկնում է Ճապոնիային՝ 10.5%, որին հաջորդում են Ֆրանսիան (9.7 %) և Կանադան (9.1 %): Վրաստանից, ԱՐՀ այլ երկրներից և Լիբանանից ժամանած գրուաշրջիկները տուր օպերատորների ծառայություններից չեն օգտվել:

Հայկական ծագումով գրուաշրջիկները տուր օպերատորների ծառայություններից օգտվել են նույնիսկ ավելի քիչ, քան միջին գրուաշրջիկը, բացառությամբ Իրանի և Կանադայի գրուաշրջիկների, որոնց դեպքում տուր օպերատորներին դիմած հայկական ծագումով այցելուների քանակը հասնում է 1.1%-ի և 13.2 %-ի համապատասխանաբար, ինչը գերանցում է այդ երկրների միջին այցելուի դրույթաչափը:


Գծապատկեր 8. Ուղևորության կազմակերպումը հանգստի և ժամանցի նպատակով ժամանակ այցելուների մոտ (%)



Տուր օպերատորների ծառայություններից, ինչպես և սպասվում էր, օգտվել են միայն հանգստի/ժամանցի նպատակով ժամանած զբոսաշրջիկները: Որևէ այլ նպատակով ժամանած զբոսաշրջիկներն իրենց ուղևորությանն արնչվող աճրագրումների 100%-ը կատարել են ինքնուրույն կամ իրենց ընկերության միջոցով: Հանգստի/ժամանցի նպատակով այցելած զբոսաշրջիկների ընդհանուր թվի 16.9%-ն օգտվել է տուր օպերատորների ծառայություններից, մինչդեռ հայկական ծագումով զբոսաշրջիկների մոտ այս դրույքաչափն ավելի ցածր է՝ կազմելով ընդհանենը 8.8%: Այսպիսով, Հայաստան ժամանած ժողովուրդը զբոսաշրջիկների ընդհանենը 2%-ն է օգտվել տուր օպերատորների ծառայություններից:

4.2.2. Կազարանը

Պատկեր 9. Կացարաններն ըստ շուկաների (բոլոր գրոսաշրջիկների տոկոսային հարաբերությունը յուրաքանչյուր հաստատված է)



Հյայստան այցելող գրուաշրջկմերի մեծամասնությունը (56.7%) հանգրվանել է ընկերության կամ բարեկամի տանը: Այս պատասխանը տված բոլոր երկրներից ժամանած այցելուների միջինը հաշվարկելու դեպքում ամենաբարձր դրույթաչափն ընկնում է Ուստասանին (74.4%), որին հաջորդում է Վրաստանը (72.3%): Ընկերների և բարեկամների տանը հանգրվանելու դրույթաչափն ամենացածրն է Ճապոնացիների մոտ՝ 2.5%, մինչդեռ իտալացիների դեպքում այն կազմում է 13.8%:

Հյուրանոցները երկրորդն են առավել շատ նշված կացարանների շարքում և բոլոր երկրներից ժամանած գրոսաշրջիկների պատասխանների միջինացված հաշվարկով կազմում են 29.6%, այնուհանդեռ որոշ երկրների դեպքում հյուրանոցները (ընկերների և հարազատների տանը պատասխանի փոխարեւն) նշվել են որպես նախընտրելի կացարաններ այդ շուկաներից ժամանածների մեծամասնությամ կողմից: Այդ երկրներից են ԱՄՆ-ն (54.2%), Կանադան (67.3%), Ճապոնիան (90%), Իտալիան (70.8%), Մեծ Բրիտանիան (64.1%), Ֆրանսիան (61.1%), Գերմանիան (65.3%), Արևմտյան Եվրոպայի այլ երկրները (70.2%) և Իրանը (42.4%): Ուստատանի և ԱՊՀ երկրների գրոսաշրջիկներն ամենաքիչն են հակված օգտվել հյուրանոցների ծառայություններից: հարազատներին արձակալվող բնակարանները, B&B-ները, հոսթելները կամ առողջարանները չեն նշվել ոչ մի երկրի գրոսաշրջիկների մեծամասնությամ կողմից որպես նախընտրելի կացարաններ մյուս տիպի կացարանների համեմատ: Իրանն ունի B&B-ներում և հոսթելներում հանգրվանող գրոսաշրջիկների ամենաբարձր դրույքաչափը՝ 16%, իսկ վարձակալվող բնակարաններում ապրող այցելուների առումով այն երկրորդն է (16.2%) Սիրիայից հետո, որտեղից ժամանած գրոսաշրջիկների 25%-ն ապրում է վարձակալվող բնակարաններում: Առողջարաններում հանգրվանողների ամենամեծ քանակն ընկնում է Վրաստանից ժամանած գրոսաշրջիկներին՝ 3.7%: Այս դեպում կարևոր է հիշել, որ Իրանի և Սիրիայի այցելուներն առավել հաճախ են այցելում Հայաստան աշխատանքի և կրթության նպատակով, ինչով էլ պայմանավորված է վարձակալվող կացարաններից օգտվելու բարձր դրույքաչափը: Բացի այդ, Վրացիների դեպում բուժման նպատակով այցելողների քանակն ամենամեծն է, ինչով էլ բացատրվում է առողջարաններում հանգրվանելու նրանց միտումը:

Ընկերների և հարազատների բնակարաններում հանգրվանող գրոսաշրջիկների տոկոսային հարաբերակցության աճ է նկատվում հայկական ծագում ունեցող այցելուների մոտ՝ 79.9%, մինչդեռ միևնույն խնբում նվազել է հյուրանոցներում հանգրվանողների դրույքաչափը՝ հասնելով 9.8%-ի: Այդ իսկ պատճառով էլ այցելության ժամանակ ընկերների և հարազատների տանը հանգրվանելու հավանականությունն առնչվում է հայկական ծագումով գրոսաշրջիկների տոկոսային հարաբերությանը:

Աղյուսակ 11. Կացարաններն ըստ այցելության նպատակի (բոլոր գրոսաշրջիկների % յուրաքանչյուր հաստատությունում)

Կացարանը	Գործնական/համաժողով	Աշխատանք	Կրթություն	Բուժում	Հանգստ և ժամանց	Մասնակցություն սպորտային և մշակութային միջոցառումների	Այցելություն ընկերներին ու հարազատներին	Այլ	Ընդամենը միջինը
Հյուրանոց	68.5	44.2	6.5	4.0	70.9	64.1	3.7	10.9	29.6
Վարձակալվող բնակարան	8.1	22.2	59.4	12.7	10.9	6.8	1.3	5.0	6.9
B&B/հոսթել	2.1	19.0	1	0	2.7	1.7	0.1	0	1.8
Ընկերոց/հարազատի տուն	14.6	9.8	28.3	67.4	17.8	23.9	91.0	72.9	56.7
Առողջարան	0.2	0	0	22.8	4.3	0.9	0.4	0.1	1.6
Այլ	9.0	12.5	7.2	10.9	7.1	4.3	6.0	12.2	7.9
Ընդամենը	102.5	107.7	102.4	117.8	113.7	101.7	102.5	101.1	104.5

Տրամաբանական է այն, որ ընկերներին ու հարազատներին այցելության եկած գրոսաշրջիկներն իրենց ուղևորության ընթացքում առավել հաճախ են հանգրվանում իրենց ընկերների ու հարազատների տանը՝ 91%: Աշխատանքի, գործնական կամ հանգստի

նպատակով այցելուներն ամենաքիչն են հակված հանգրվանել ընկերների և հարազատների տանը՝ 9.8%, 14.6% և 17.8% համապատասխանաբար:

Բոլոր կատեգորիաներից հյուրանոցներում հանգրվանողների ամենամեծ քանակը կազմում են գործնական (68.5%) կամ հանգստի ու ժամանցի (70.9%) նպատակով այցելած զբոսաշրջիկները: Աշխատանքի և կրթության նպատակով ժամանած զբոսաշրջիկներն առավել հաճախ են հանգրվանում վարձակալվող բնակարաններում, ինչն, ամենայն հավանականությամբ, կապված է երկրում յուրաքանչյուր այցելությանն ընկնող ավելի շատ օրերի հետ: Աշխատանքի նպատակով Հայաստան այցելող զբոսաշրջիկները նաև ամենաշատն են հակված հանգրվանել B&B-ում կամ հոսթելում՝ 12.3%: Հասկանալի է, որ բուժման նպատակով այցելողներն ավելի շատ հակված են հանգրվանել առողջարաններում՝ 22.8%:

Ընկերների և հարազատների տանը հանգրվանողների ամենամեծ քանակը բոլոր կատեգորիաների համար ընկնում է հայկական ծագումով զբոսաշրջիկներին: Ինչևէ, նրանց մոտ նկատվում է նաև վարձակալվող բնակարանների նկատմամբ հետաքրքրության աճ գործնական (+3.9%), բուժման (+1.3%) կամ հանգստի/ժամանցի (+4%) նպատակով այցելելու պարագայում: Նրանց մոտ նաև նկատվում է հետաքրքրության աճ B&B-ների և հոսթելների (+2%), ինչպես նաև առողջարանների (+1%) նկատմամբ սպորտային կամ մշակութային միջոցառումների մասնակցության նպատակով այցելությունների ժամանակ:

Աղյուսակ 12. Կացարաններն ըստ այցելության նպատակի (գիշերների միջին քանակն ըստ կացարանի յուրաքանչյուր տեսակի մեկ զբոսաշրջիկի հաշվով)

Կացարանը	Գործնական/համաժողով	Աշխատանք	Կրթություն	Բուժում	Հանգստ և ժամանց	Մասնակցություն սպորտային և մշակութային միջոցառումների	Այցելություն ընկերներին ու հարազատներին	Այլ	Ընդամենը միջինը
Հյուրանոց	6.3	9.5	7.3	12.5	8.3	9.0	8.7	9.9	7.5
Վարձակալվող բնակարան	18.3	44.3	89.8	42.3	16.0	17.4	26.2	43.5	37.2
B&B/հոսթել	6.2	5.5	200	0	6.3	12.5	9.3	0	7.5
Ընկերոջ/հարազատի տուն	12.8	58.1	49.3	21.1	15.6	21.9	24.5	16.8	22.9
Առողջարան	2.3	0	0	15.2	5.7	2.0	7.9	8.0	10.8
Այլ	10.0	30.5	84.2	12.7	10.1	12.2	39.5	29.5	25.9
Գիշերների միջին քանակը մեկ զբոսաշրջիկի հաշվով	8.5	22.8	73.7	21.2	10.1	12.7	24.8	18.9	19.3

Հասկանալի է, որ Հայաստան այցելության ամենաերկար տևողությունը՝ միջինում 37.2 գիշեր, ընկնում է վարձակալվող բնակարաններում հանգրվանող զբոսաշրջիկներին: Այս պատասխանին հաջորդում է «այլ» տիպի կացարան պատասխանը՝ 25.9%: Ամենակարձ ժամանակահատվածն ընկնում է B&B-ներում կամ հոսթելներում հանգրվանած զբոսաշրջիկներին (միջինում 7.5 գիշեր) և հյուրանոցներին (նույնպես միջինում 7.5 գիշեր):

B&B-ներում և հոսթելներում (200 գիշեր), վարձակալվող բնակարաններում (89.8 գիշեր) և «այլ» տիպի կացարաններում (84.2 գիշեր) անցկացրած գիշերների միջին քանակն ամենամեծն է կրթության նպատակով Հայաստան այցելող զբոսաշրջիկների մոտ: Բուժման նպատակով այցելողներն ամենաերկարն են հանգրվանել հյուրանոցներում (12.5 գիշեր) և առողջարաններում (15.2 գիշեր), իսկ աշխատանքի և կրթության նպատակով ժամանած-

ներն ամենաերկարն են հանգրվանել ընկերների ու հարազատների տանը՝ ըստ գիշերների միջին քանակի՝ 58.1 և 49.3 գիշեր համապատասխանաբար:


Հանգստի/ժամանցի նպատակով ժամանած զբոսաշրջիկներն ավելի երկար հանգրվանել են վարձակալվող բնակարաններում (միջինում 16 գիշեր) կամ ընկերոց կամ հարազատի տանը (միջինում 15.6 գիշեր):

Զբոսաշրջիկների ծագման հիմնական երկրների միջև նշանակալի տարբերություններ չեն գրանցվել: Բացառություն էին կազմում Արևմտյան Եվրոպայի «այլ» երկրներից ժամանող զբոսաշրջիկները, ովքեր, հիմնականում, երկար ժամանակով են հանգրվանել առողջարաններում՝ միջինում 49 գիշեր, և Ճապոնիայից ժամանածները, որոնց դեպքում այցելության միջին տևողությունը հատկապես երկար է՝ կազմելով 117 գիշեր վարձակալվող բնակարանների համար:


Հայկական ծագումով զբոսաշրջիկների այցելության տևողությունը նույնն է կամ մի փոքր երկար է բոլոր տիպի կացարանների համար: Կացարանների միակ տեսակը, որի համար նշանակած գիշերների քանակը նշանակալիորեն տարբերվում են միջին զբոսաշրջիկի գիշերների քանակից, դա «այլ» կատեգորիան է, որտեղ այցելույան տևողությունը երկարել է 9.6 գիշերով:

4.2.3. Այցելության տևողությունը

Գծապատկեր 10. Այցելության տևողությունն ըստ շուկաների (գիշերների միջին թիվը)



Գծապատկեր 11. Այցելության ընդամենը միջին տևողությունը (օրեր)



Պատասխանողների մեծամասնությունը (25.3%) նշել է, որ Հայաստանում իր այցելությունը տևել է 4-7 գիշեր, իսկ նրանց հաջորդող մյուս խոչոր խումբը (25%) բաղկացած է այն գրոսաշրջիկներից, ում այցելությունը տևել է 22 գիշեր կամ ավելի: Ամենաքիչ պատասխանները ստացել է 15-21 գիշեր կատեգորիան, որը նշվել է պատասխանողների ընդամենը 9.8%-ի կողմից: Բավականին մեծ է 1-3 օր կատեգորիան նշած պատասխանողների քանակը (18.9%), ինչև այսպես պատասխանած գրոսաշրջիկները, մեծամասամբ, ժամանել են հարևան Վրաստանից և Իրանից: Ուստաստանից ժամանածների այցելության տևողությունը, իհմնականում, ավելի քան 22 գիշեր է՝ 46.6%:

Համապատասխանաբար, Ուստաստանից ժամանածների Հայաստան այցելության միջին տևողությունն ամենաերկարն է՝ 32 գիշեր, որոնց հաջորդում է Լիբանանը՝ 31.7 գիշեր և Սիրիան՝ 30.6 գիշեր, իսկ ամենակարճ տևողությունը գրանցվել է Վրաստանից (8.6 գիշեր) և Իրանից (13.6 գիշեր) ժամանած գրոսաշրջիկների համար: Արևելյան Եվրոպայի երկրների, Ճապոնիայի և Կանադայի գրոսաշրջիկների այցելության միջին տևողությունը 13-15.5 գիշեր է, իսկ ԱՄՆ-ից ժամանածների դեպքում գիշերների միջին քանակը մի փոքր ավելի քարձո՞ր է՝ 19.1 գիշեր:

Ինչպես և սպասվում էր, հայկական ծագումով գրոսաշրջիկների դեպքում ավելի մեծ է երկարատև այցելությունների դրույքաչափը, նրանց մեծամասնության այցելության տևողությունը 22 կամ ավելի գիշեր է: Բացի այդ, Հայաստանում անցկացրած գիշերների միջին քանակը նույնպես աճել է բոլոր երկրներից ժամանած հայկական ծագումով գրոսաշրջիկների համար:

Աղյուսակ 13. Հայաստան այցելության տևողությունն ըստ այցելության նպատակի (%)

Այցելության տևողություն	Գործնական/համաժողով	Աշխատանք	Կրթություն	Բուժում	Հանգիստ և ժամանաց	Մասնակցություն սպորտային և մշակութային միջոցառումների	Այցելություն ընկերներին ու հարազատներին	Այլ
1-3 գիշեր	37.3	37.9	3.6	9.1	6.8	16.2	12.2	19.6
4-7 գիշեր	34.3	24.9	5.8	17.8	40.3	26.5	18.1	26.2
8-14 գիշեր	17.3	11.4	8.7	22.1	36.5	33.3	19.7	21.6
15-21 գիշեր	5.3	7.6	6.5	17.0	8.0	11.1	11.8	11.8
22+ գիշեր	5.7	18.2	75.4	34.1	8.4	12.8	38.2	20.8
Գիշերների միջին քանակը	8.7	24.6	75.3	24.9	11.5	12.9	25.4	19.1

Աակը


Գիշերների ամենաբարձր միջին քանակն ընկնում է այն գրոսաշրջիկներին, ովքեր Հայաստան են այցելել Կրթության կամ ընկերությին ու հարազատներին այցելության նպատակով՝ 75.3 և 25.4,5 գիշեր համապատասխանաբար։ Նրանց մոտ նաև ամենաբարձրն է 22 և ավելի գիշեր տևողությամբ այցելությունների դրույքաչփ՝ այս կատեգորիան ընտրվել է Կրթության նպատակով ժամանածների 75.4%-ի և ընկերությին ու հարազատներին այցելուների 38.2%-ի կողմից։

Ինչեւ, գործնական և աշխատանքի նպատակով ժամանած զրոսաշրջիկների մեծանասնությունը Հայաստանում մնացել է ընդամենը 1-3 զիշեր: Այսպես է պատասխանել գործնական նպատակով ժամանածների 37.3%-ը և աշխատանքի նպատակով ժամանածների 37.9%-ը: Հայաստանում անցկացրած զիշերների միջին քանակի առումով այցելությունների ամենակարծ տևողությունն ընկնում է գործնական նպատակով ժամանած զրոսաշրջիկներին: Հանգստի/ժամանցի, ինչպես նաև սպորտային և մշակութային միջոցառումներին մասնակցության նպատակով այցելած զրոսաշրջիկների մոտ Հայաստանում անցկացրած զիշերների միջին քանակը նույնպես համեմատաբար ցածր է՝ 11.5 և 12.9 զիշեր համապատասխանաբար:


Հայկական ծագում ունեցող զբոսաշրջիկների մոտ միակ նշանակալի տարրերությունն այն է, որ կրթության նպատակով այցելողների դեպքում գիշերների միջին քանակն ավելի մեծ է, քան միջին զբոսաշրջիկի դեպքում՝ 67.9 գիշեր, բացի այդ մեծ է նաև 22 գիշերից ավելի տևողությամբ այցելություն կատարած զբոսաշրջիկների տոկոսը՝ 78.7%:

4.2.4. Ուր են այցելել

Գծապատկեր 12. Այցելության վայրերն ըստ շուկաների (%)



Գծապատկեր 13. Այցելության վայրերի միջին քանակն ըստ շուկաների




Երևանը Հայաստանի առավել շատ այցելուներ ունեցող վայրն է: Պատասխանողների 83.5 %-ը առնվազն որոշ ժամանակ է անցկացրել այստեղ: Արմավիրի և Կոտայքի մարզերը նույնականացնելու համապատասխանաբար: Զբոսաշրջիկների այցելությունների ամենացածր դրույքաչափը գրանցվել է Սյունիքի մարզի և Լեռնային Ղարաբաղի համար՝ 28.3% և 23.7% համապատասխանաբար: Զբոսաշրջիկների այցելությունների ամենացածր դրույքաչափը գրանցվել է Սյունիքի մարզի և Լեռնային Ղարաբաղի համար՝ 4.7% և 4.3% համապատասխանաբար: Առկա միտումները ցույց են տալիս, որ Երևանին մոտ տեղակայված վայրերն ավելի շատ այցելուներ են ունենում, իսկ Երևանից առավել հեռու շրջաններն ամենամեծ դժվարություններն ունեն կապված զբոսաշրջիկները գրավելու հետ:

Երևանում անցկացրած ժամանակի առումով ամենացածր դրույքաչափը գրանցվել է Ռուսաստանի և Վրաստանի համար, որոնց զբոսաշրջիկների ընդամենը 86.3% և 61.3%-ն է ժամանակ անցկացնում այստեղ: Այս տվյալները տարբերվում են մյուս երկրների համար ստացված տվյալներից, որոնց բոլորի դեպքում զբոսաշրջիկների 90%-ը կամ ավելին այցելում են Երևան: Հեռավոր վայրեր ամենաքիչն են ուղևորվել Հյուսիսային Ամերիկայի և Արևմտյան Եվրոպայի երկրներից ժամանած զբոսաշրջիկները:

Ընդհանուր առնամբ, այցելության վայրերի միջին քանակը կազմում է ընդամենը 2.4: Ամենամեծ թվով վայրեր այցելել են կանադացիները՝ 5.1 վայր մեկ այցելության ընթացքում, իսկ ամենաքիչ թվով վայրեր այցելել են Վրաստանից և Իրանից ժամանած զբոսաշրջիկները՝ 1.6 վայր յուրաքանչյուր երկրի դեպքում:

Գծապատկեր 14. Այցելության վայրերն ըստ այցելության նպատակի (%)




Տրամաբանական է, որ Հայաստան աշխատանքի նպատակով ժամանած այցելուներին ընկնում է տարբեր Վայրեր այցելությունների ամենափոքր միջին քանակը (1.4), մինչդեռ հանգստի/ժամանցի նպատակով ճանապարհորդողներն այցելել են առավելագույն թվով Վայրեր (5.6): Գործնական և բուժման նպատակով այցելած զբոսաշրջիկները նոյնաեւ այնքան էլ միտված չեն այցելել տարբեր Վայրեր, և երկու խմբերում էլ զբոսաշրջիկները միջինում այցելել են 2-ից պակաս տարբեր Վայրեր:

Ընկերներին ու հարազատներին այցելության եկած կամ «այլ» նպատակներով ձանապարհող գրոսաշրջիկներն ամենաշատն են հակված ժամանակ անցկացնել Երևանից դուրս և նրանց ընդամենը 76.5% և 74.1%-ն է ժամանակ անցկացնում քաղաքում կրթության և բուժման նպատակով այցելածների ավելի քան 80%-ի և բոլոր մյուս գրոսաշրջիկների ավելի քան 90%-ի համեմատ: Հանգստի/ժամանցի նպատակով ձանապարհող գրոսաշրջիկներն ունեն Երևանից դուրս բոլոր այլ վայրեր այցելության ամենաբարձր տոկոսային հարաբերությունը:


Միշին այցելուի և հայկական ծագումով այցելուների միջև չկան նկատելի տարրերություններ այցելած վայրերի առումով:

4.2.5. Զբոսաշրջիկների գիշերների բաշխումը

Գծապատկեր 15. Զբոսաշրջիկների գիշերների բաշխումն ըստ շուկաների (%)



Գծապատկեր 16. Զբոսաշրջիկների անցկացրած գիշերների բաշխումն ըստ այցելության նպատակի (%)



Զբոսաշրջիկների կողմից Երևանում անցկացրած գիշերների ամենաբարձր դրույքաչափն ընկնում է կրթության նպատակով ժամանաճներին՝ 93.7%, իսկ ամենացածրը՝ ընկերներին ու հարազատներին այցելության եկած զբոսաշրջիկներին 53.6%-ի չափով:

Ընկերներին և հարազատներին այցելության եկած զբոսաշրջիկներն այն խումբն է, որն ունի մի քանի այլ մարզերում հանգրվանելու ամենաբարձր դրույքաչափը, հատկապես Շիրակի մարզում՝ 14.3%, Լոռու մարզում՝ 5.9% և Արմավիրի մարզում՝ 6.3%: Հաշվի առնելով հարցման մյուս արդյունքները՝ խելամիտ է թվում այն, որ նշված վայրեր, հատկապես Շիրակի մարզ այցելության բարձր դրույքաչափի պատճառներից մեկը կարող է լինել այն, որ Վրաստանից և Ռուսաստանից ժամանածներն այս շրջանում բազմաթիվ ընկերներ և հարազատներ ունեն:

Բուժման նպատակով ժամանած զբոսաշրջիկներն այլ նպատակներով այցելողների համեմատ նշանակալիորեն ավելի շատ ե հանգրվանլ Վայոց Ձորի մարզում, Վերջինիս է ընկնում նրանց կողմից անցկացված գիշերների 13.1%-ը: Հանգստի/ժամանցի նպատակով ժամանած զբոսաշրջիկներն ավելի շատ գիշերներ են անցկացրել Կոտայքի մարզում (7.4%), իսկ սպորտային և մշակութային միջոցառումների մասնակից զբոսաշրջիկներն ավելի մեծ թվով գիշերներ են անցկացրել Արարատի մարզում (5.6%):

4.3. Այցելումների կողմից տրված գնահատականները

4.3.1. Հարմարությունների և ծառայությունների գնահատումը

Աղյուսակ 14. Հարմարությունների և ծառայությունների որակի գնահատում (%)

Հարմարություններ և ծառայություններ	Գերազանց (5)	Լավ (4)	Բավարար (3)	Վատ (2)	Ծատ վատ (1)	Միջին գնահատ ական
Հյուրանոցներ	38.2	52.2	7.7	1.4	0.4	4.3
Ռեստորաններ	45.8	43.4	9.4	1.1	0.3	4.3
Արողջարաններ	53.9	33.6	8.8	2.9	0.7	4.4


Հարմարություններ և ծառայություններ	Գերագանց (5)	Լավ (4)	Բավարար (3)	Վատ (2)	Ծատ վատ (1)	Միջին գնահատ ական
Տուր օպերատորներ	41.5	47.7	9.7	0.7	0.4	4.3
Գների մակարդակը	9.3	38.5	30.8	13.3	8.0	3.3
Միջազգային տրանսպորտ	29.6	50.6	16.3	2.7	0.8	4.1
Ներքին ճանապարհներ	7.1	36.5	26.8	17.2	12.4	3.1
Տեսարժան վայրեր	66.9	27.7	4.6	0.5	0.3	4.6
Զբոսավարի ծառայություններ	47.5	36.0	11.2	2.3	3.0	4.2
Սահմանային ծառայությունների արդյունավետությունը	22.9	48.7	19.9	6.0	2.5	3.8

Հարցագրուցավարները պատասխանողներին խնդրել են գնահատել տարբեր ծառայություններ և հարմարություններ 1-5 բալային համակարգով, որտեղ 5-ը նշանակում է գերագանց հարմարություններ/ծառայություններ, իսկ 1-ը՝ շատ վատ ծառայություններ/հարմարություններ: Ամենացածր գնահատականները տրվել են Հայաստանի ներքին ճանապարհներին՝ միջինում 3.1, և գների մակարդակին՝ միջինում 3.3 գնահատական: Ամենաբարձր գնահատականները տրվել են Հայաստանի տեսարժան վայրերին, որոնք միջինում գնահատավել են 4.5 և առողջարաններին, որոնց միջին գնահատականը 4.4 է:

Միջին առավելագույն գնահատականը տրվել է հանգստի/ժամանցի նպատակով այցելած զբոսաշրջիկների կողմից, իսկ ամենացածր գնահատականը՝ 3.6, տրվել է կրթության նպատակով այցելածների կողմից:


4.3.2. Հայաստան կրկին այցելելու ցանկությունը

Գժապատկեր 17. Հայաստան կրկին այցելելու ցանկությունն ըստ շուկաների (%)



Հայաստան այցելած զբոսաշրջիկների գերակշռող մեծամասնությունը (97.3%) նշել է կրկին այցելելու մտադրության կամ հետաքրքրվածության մասին: Այս թիվն ավելի բարձր է և հասնում է 98.8%-ի հայկական ծագումով զբոսաշրջիկների մոտ: Հայաստան կրկին այցելելու ամենաքիչ ցանկությունն արտահայտել են գերմանացիները, որոնց 10.1%-ը պատասխանել է, որ մտադիր չէ վերադառնալ: Նրանց հաջորդում են ֆրանսիացիները՝ 4.2%: Հույները և Սիրիայից ժամանածներն ամենամեծ հետաքրքրությունն են ցուցաբերել կրկին Հայաստան այցելելու նկատմամբ, որոնց 100%-ը պատասխանել է, որ ունի իր ուղևորությունը կրկնելու ցանկություն:

Գծապատկեր 18. Հայաստան կրկին այցելելու ցանկությունն ըստ նպատակի (%)



Հայաստան կրկին այցելելու նկատմամբ նվազագույն հետաքրքրությունը դրսնորել են հանգստի/ժամանցի նպատակով այցելած գրոսաշրջիկները, որոնց 7%-ը նշել է, որ չի նախատեսում վերադառնալ: Հնարավոր է, որ հանգստի նպատակով ձանապարհորդող գրոսաշրջիկները գերադասում են այցելել տարբեր վայրեր և երկներ, մինչդեռ այլ տիպի գրոսաշրջիկները, ինչպիսիք են գործնական կամ ընկերներին ու հարազատներին այցելության նպատակով ձանապարհորդողները, ունեն հասուն կապվածություն Հայաստանի հետ, որն էլ նրանց ստիպում է վերադառնալ:

Եվս մեկ այցելությամբ հետաքրքրվածության ամենաբարձր մակարդակը գրանցվել է ընկերներին և հարազատներին հանդիպելու և կրթության նպատակով այցելող գրոսաշրջիկների մոտ, որոնց համապատասխանաբար 98.5%-ը և 100%-ը նախատեսում է կրկնել ուղևորությունը:

4.3.3. Λαγκαστερόπολη ή ανασταύρωση στην περιοχή

Այլուսակ 15. Հայաստանի որպես հանգստավայր խորհուրդ տայր բար շուկաների (%)

Հայաստան այցելած զբոսաշրջիկների 97.1%-ը նշել է, որ խորհուրդ կտա ընկերներին և հարազատներին այցելել Հայաստան հանգիստն անցկացնելու համար։ Հայաստանի որպես հանգստավայրի մասին առավել մեծ համոզվածություն են արտահայտել կանադացիները և ճապոնացիները։ Երկու երկրներից ժամանած զբոսաշրջիկների 100%-ը նշել է Հայաստան այցելությունն ընկերների և հարազատներին խորհուրդ տալու մասին։ Այցելուների միայն 2.9%-ը խորհուրդ չի տա Հայաստանը որպես հանգստավայր։ Լիբանանցիները այցելուներն ամենաքիչն են հակված խորհուրդ տալ Հայաստանը։ Նրանց համապատասխանաբար 8.8%-ը և 6.3%-ը ընտրել է ոչ պատասխանը։

**Այլուսակ 16. Հայաստանը որպես հանգստավայր խորհուրդ տալը ըստ այցելության
նպատակների (%)**

Խորհուրդ կտան ընկերմնե- րին և հարա- զատներին	Գործ- նական/ համա- ժողով	Աշխա- տանք	Կրթու- թյուն	Բու- ժում	Հան- գիստ և ժա- մանց	Ակտիվ մաս- նակցություն սպորտային կամ մշակու- թային միջոցա- ռումների	Այցելությու- ն ընկեր- մներին և հարա- զատ- ներին	Այլ	Ընդա մենը միջին
Այլ	96.3	96.6	98.4	96.2	97.8	98.2	97.6	96.0	97.1
Ոչ	3.7	3.4	1.6	3.8	2.2	1.8	2.4	4.0	2.9
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100

Այցելության «այլ» նպատակներ պատասխանն ընտրած գրոսաշրջիկներն ամենաքիչն են միտված խորհուրդ տալ Հայաստանն իրենց ընկերմներին և հարազատներին, նրանց 4%-ն ընտրել է «ոչ» պատասխանը, մինչեւ կրթության նպատակով ժամանած գրոսաշրջիկներն ամենաշատն են միտված խորհուրդ տալ այցելել Հայաստան, և նրանց ընդամենը 1.6%-ն է այդ հարցին տվել բացասական պատասխան (չնայած նրանք ցածր են գնահատել այստեղ տրամադրվող ծառայությունները):

Հայկական ծագում ունեցող գրոսաշրջիկների դեպքում միակ նշանակալի տարբերությունը նկատվում է աշխատանքի նպատակով ժամանածների խմբում, որոնց 7.3%-ը նշել է, որ չի խորհուրդ տա Հայաստանը որպես հանգստավայր, ինչը 3.9%-ով գերազանցում է այս հարցին բացասական պատասխան տված աշխատանքի նպատակով այցելած գրոսաշրջիկների միջինացված դրույքաչափը:

4.4. Այցելուների ծախսերը¹

4.4.1. Մեկ անձին ընկնող միջին ծախսերը և օրական ծախսերը օրական ծախսերը

¹ Ծախսերի հաշվարկման համար կիրառվել է հետևյալ մոտեցումը.

Տուր փաթեթի արժեքը կրճատվել է (հարցաշարի 17-րդ տողը) 20%-ով՝ հաշվի առնելով տուր օպերատորների կոմիսիոն վաճառքի շահն այն երկրներում, որոնցից ժամանել են գրոսաշրջիկները:

Եթե փաթեթում ընդգրկված են նաև միջազգային տրանսպորտի ծախսերը, և եթե այդ ծառայությունները տրամադրվել են ավիափոխադրումների օտարերկրյա ընկերության կողմից, ապա փաթեթի արժեքը կրճատվել է միջինում ևս 35%-ով և բաժանվել է մարդկանց քանակի վրա:

Եթե փաթեթի արժեքի մեջ միջազգային տրանսպորտի ծախսերը չեն մտնում և նրանք օգտվել են Արմավիա ընկերության ծառայություններից, ապա ավելացվել են համապատասխան տրանսպորտային ծախսերը (տող 17.3) և գումարը բաժանվել է մարդկանց համապատասխան քանակի վրա:


Ինքնուրույն ճանապարհորդների ծախսերը հաշվարկվել են հետևյալ մոտեցման կիրառմամբ.

Միջազգային տրանսպորտի ծախսերը հանվել են ծախսերի ընդհանուր թվից, եթե այցելուն օգտվել է օտարերկրյա ավիաընկերության ծառայություններից, և գումարը բաժանվել է մարդկանց քանակի վրա (տող 19.2):

Այլուսակ 17. Հայաստանում կատարված միջին ծախսերը և օրական ծախսերը մեկ անգի հաշվարկով ըստ ուղևորության կազմակերպման ձևի և շուկաների (ԱՄՆ դրամ)

Ծախսերը	ԱՄՆ	Ապարահ	Ճապոնիա	Ռուսաստան	Կիրառական	Արևոտք	Հունաստան	Հայաստան	Ֆրանսիա	Արգենտինա	Գերմանիա	Արմենիա	Արմենիա	Արմենիա	Արմանիա	Արմանիա	Արմանիա	Արմանիա	Արմանիա	Արմանիա	
ԲՈԼՈՐԸ																					
Միջին ընդամենը ծախսերը	1567.0	1860.8	1669.7	715.2	112.6	991.7	1283.1	1524.4	1180.2	1619.4	1377.9	1490.4	1611.5	1175.0	460.0	1160.4	705.4				
Այցելության միջին տևողությունը	18.9	13.1	12.0	31.4	8.1	23.6	13.3	12.4	15.8	14.4	15.8	14.0	31.6	30.2	12.9	23.2	19.6				
Օրական միջին ծախսերը	82.7	142.1	139.5	22.8	13.9	41.9	96.4	122.7	74.6	112.1	87.1	106.6	51.0	38.9	35.6	49.9	36.0				
ՏՈՒՐ ՓԱԹԵԹՆԵՐ																					
Միջին ընդամենը ծախսերը	3025.7	2651.1	2700.0	1717.6	0.0	0.0	1800.0	1847.3	2250.0	2474.5	2273.8	2630.3	0.0	930.0	646.9	2181.2	2350.9				
Այցելության միջին տևողությունը	11.4	12.2	7.5	7.3	0.0	0.0	9.0	10.8	8.7	11.5	10.4	10.3	0.0	7.0	8.7	10.3	10.5				
Օրական միջին ծախսերը	266.3	217.3	360.0	234.2	0.0	0.0	200.0	171.0	258.2	215.5	218.4	255.4	0.0	132.9	74.6	211.1	224.3				
ԻՆՔՍՈՒՐՈՒՅՆ																					
Միջին ընդամենը ծախսերը	1454.2	1747.9	1485.7	713.6	112.6	991.7	1276.6	1491.1	1083.7	1531.6	1295.4	1379.3	1611.5	1183.6	458.0	1034.5	667.5				
Այցելության միջին տևողությունը	19.6	13.2	12.7	31.4	8.1	23.6	13.4	12.6	16.2	14.8	16.3	14.3	31.6	30.8	12.9	24.5	19.8				
Օրական միջին ծախսերը	74.2	132.5	117.4	22.7	13.9	41.9	95.3	118.6	66.8	103.6	79.3	96.4	51.0	38.4	35.4	42.1	33.7				

Գծապատկեր 19. Միջին ծախսերը և օրական ծախսերը մեկ անձի հաշվարկով բոլոր այցելուների կտրվածքով (ԱՄՆ դոլար)




Բոլոր զբոսաշրջիկների համար ընդամենը միջին ծախսերը մեկ անձի հաշվարկով կազմում էն 705.40 ԱՄՆ դոլար, այցելության միջին տևողությունն է 19.6 օր, իսկ միջին օրական ծախսերը կազմում էն 36.00 ԱՄՆ դոլար:

Չնայած նրան, որ Հայաստան տուր փաթեթով այցելողները զբոսաշրջիկների մեջ փոքր մասնաբաժին ունեն, նրանց ծախսերը մեկ ուղևորության հաշվարկով նշանակալիորեն ավելի մեծ են՝ կազմելով միջինում օրական 224.30 ԱՄՆ դոլար 10.5 օր միջին տևողությամբ ուղևորությունների համար և 2,350.90 ԱՄՆ դոլար ընդամենը ծախսերի առումով: Ինքնուրույն ճանապարհորդողների միջին ծախսերը կազմում էն ընդամենը 667.50 ԱՄՆ դոլար 19.8 օր ընդհանուր տևողությամբ այցելության ընթացքում՝ օրական ծախսերը հասցնելով միջինում 33.70 ԱՄՆ դոլարի:

Կանադացիների Հայաստան այցելության ժամանակ կատարած ծախսերն ամենամեծն են՝ կազմելով 1,860.80 ԱՄՆ դոլար մեկ այցելության հաշվարկով, երբ ուղևորության միջին տևողությունը 13.1 օր է, այսինքն՝ օրական միջինում 142.10 ԱՄՆ դոլար: Նրանց հաջորդում են Ճապոնացիները, որոնց մեկ ուղևորությանն ընկնող ծախսերը կազմում էն 1,669.70 ԱՄՆ դոլար 12 օր տևողությամբ այցելության համար, այսինքն՝ օրական միջինում 139.50 ԱՄՆ դոլար: Անենաքիչ ծախսեր կատարում են Վրացիները՝ 112.6 ԱՄՆ դոլար 8.1 օր տևողությամբ յուրաքանչյուր ուղևորության համար: Նրանց օրական միջին ծախսերը կազմում են ընդամենը 13.90 ԱՄՆ դոլար: Իրանից ժամանած զբոսաշրջիկները նույնպես շատ չեն ծախսում Հայաստանում՝ միջինում 460.00 ԱՄՆ դոլար 12.9 օր տևողությամբ յուրաքանչյուր ուղևորության համար՝ ծախսելով օրական 35.60 ԱՄՆ դոլար:


Գծապատկեր 20. Միջին ծախսերը և օրական ծախսերը մեկ անձի հաշվարկով ըստ շուկամերի. տուր փաթեթներ (ԱՄՆ դոլար)



Տուր փաթեթով կատարած ուղևորությունների առումով առավելագույն ծախսերն ընկնում են ամերիկացիներին՝ 3,025.70 ԱՄՆ դոլար, որոնց հաջորդում են ճապոնացիաները՝ 2,700 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր ուղևորության համար, ինչեւ ճապոնացիներն ավելի շատ են ծախսում օրական ծախսերի հաշվարկով՝ 360 ԱՄՆ դոլար, իսկ ԱՄՆ-ից ժամանած գրոսաշրջիկները հաջորդում են նրանց՝ ծախսելով օրական 266.30 ԱՄՆ դոլար։ Հարկ է նշել, որ ճապոնացի գրոսաշրջիկների ուղևորությունների միջին տևողությունն ավելի կարծ է՝ ընդամենը 7.5 օր, մինչդեռ տուր փաթեթով ճանապարհորդող ամերիկացի գրոսաշրջիկների այցելությունը մոտ 4 օրով ավելի երկար է, ինչը նշանակում է, որ եթե ճապոնացիների այցելություններն ավելի երկար տևողություն ունենային, ապա նրանք առաջնային կիմնեին ծախսերի առումով տուր փաթեթով ճանապարհորդողների խնբում։

Որոշ երկրների, այդ թվում Վրաստանի, ԱՊՀ այլ երկրների և Լիբանանի դեպքում տուր փաթեթով ճանապարհորդող գրոսաշրջիկներ չեն գրանցվել։ Տուր փաթեթով ճանապարհորդող գրոսաշրջիկներ ունեցող երկրների շարքում ամենաքիչ ծախսերն ընկնում են Իրանին՝ 646.90 ԱՄՆ դոլար, միջին օրական ծախսերը՝ 74.60 ԱՄՆ դոլար, իսկ այցելության տևողությունը՝ 8.7 օր։


Գծապատկեր 21. Միջին և օրական ծախսերի ինքնուրույն ճանապարհորդողների խմբում (ԱՄՆ դոլար)



Ինքնուրույն ճանապարհորդող գրոսաշրջիկների խմբում ծախսերի ամենաբարձր դրույթաչափը գրանցվել է կանադացիների մոտ և՝ ընդհանուր ծախսերի (1,747.90 ԱՄՆ դոլար) և՝ օրական ծախսերի (\$132.50) առումով: Նրանց հաջորդում են լիբանանցիները 1,611.50 ԱՄՆ դոլար ընդհանուր ծախսերով: Ինչևէ, լիբանանի դեպքում օրական ծախսերն ավելի ցածր են՝ օրական 51 ԱՄՆ դոլար, իսկ ընդհանուր ծախսերի թիվը պայմանավորված է այն հանգամանքով, որ լիբանանցի այցելուների այցելության միջին տևողությունը 31.6 օր է, մինչդեռ կանադացիները, ճապոնացիաները և իտալացիները (ովքեր հաջորդն են օրական ծախսերի առումով) ընդհանուր մոտավորապես 13 օր են անցկացնում երկրում:

Այս անգամ ևս վրացիներն ամենաքիչ ծախսեր կատարողներն են և՝ ընդհանուր ծախսերի (112.6 ԱՄՆ դոլար) և՝ օրական ծախսերի (13.90 ԱՄՆ դոլար) առումով: Այս թվերը նույնն են, ինչպես բոլոր այցելուների մոտ, քանի որ նրանց համար ոչ մի տուր փաթեթով ուղևորություն չի գրանցվել: Ինքնուրույն ճանապարհորդող գրոսաշրջիկների խմբում ծախսերի հաջորդ ամենացածր դրույթաչափն ընկնում է իրանից ժամանածներին, ովքեր ծախսում են ընդհանուր 458 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր ուղևորության վրա, ինչևէ, նրանց օրական ծախսերը մի փոքր ավելի բարձր են, քան ռուսներինը, ում օրական ծախսերը կազմում են ընդհանուր 22.70 ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 22. Հայկական ծագումով այցելուների օրական և միջին ծախսերի համեմատությունը:



■ Ընդհանուր միջինը /բոլոր այցելուներ/ ■ Ընդհանուր միջինը /հայկական ծագումով այցելուներ/

Հայկական ծագումով այցելուներն ավելի քիչ են ծախսում ընդամենը ծախսերի (678.70 ԱՄՆ դոլար մեկ ուղևորության համար), ինչպես նաև օրական ծախսերի (օրական 27.90 ԱՄՆ դոլար) առումով միջին գրոսաշրջիկի համեմատ: Երկրում գտնվելու ժամանակահատվածում նրանց ծախսերի դրույքաչափի վրա բացասաբար է անդրադարձել նաև նրանց ուղևորության ավելի երկար ժամանակահատվածը (հայկական ծագումով գրոսաշրջիկների այցելության միջին տևողությունը 5 օրով ավելի երկար է), այսինքն՝ նրանց միջին գրոսաշրջիկի հետ համեմատելու դեպքում նրանց ընդամենը ծախսերը, փաստորեն, նույնիսկ ավելի փոքր կլինեն: Սա, հավանաբար, պայմանավորված է այն փաստով, որ հայկական ծագումով գրոսաշրջիկները երկրում եղած ժամանակահատվածում ավելի հակված են հանգրվանել իրենց ընկերների և հարազատների տանը և, հետևաբար, ավելի քիչ գումար ծախսել կացարանի և սննդի վրա:

Աղյուսակ 18. ՄԵԿ ՄԱՐԴԻ ԽԱՉՎԱՐԿՈՎ ՄԻՋԻՆ Կ ՕՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐՆ ԾԱՍՏ ՈՒՂԵՆՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԳՄԱԿԵՐԱՎՄԱՆ ՃԿԻ և ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՆԱՓԱՏՈՎԱԿԻ (ԱՄՆ ԴՈԼԱՐ)


ԾԱԽՍԵՐԸ	Գործնական/համաժողով	Աշխատանք	Կրթություն	Բուժում	Հանգիստ և ժամանակ	Ակտիվ մասնակցություն սպորտային կամ մշակութային միջոցառումների	Այցելություն ընկերներին և հարազատներին	Այլ	Ընդամենը միջին
ԲՈԼՈՐԸ									
Միջին ընդամենը ծախսերում	645.2	618.0	1181.7	717.5	1294.8	1158.6	582.3	664.4	724.1
Այցելության միջին տևողությունը	9.0	18.0	73.0	25.4	11.5	14.5	24.9	17.5	19.6
Միջին օրական ծախսերը	71.8	34.3	16.2	28.3	112.2	79.8	23.4	38.1	36.9

Հանգստի նախակով ժամանողները հանդիսանում են ծախսերի ամենաբարձր դրույքաչափի ունեցող խումբը, որոնց դեպքում յուրաքանչյուր ուղևորությանն ընկնող միջին ծախսը կազմում է 1,294.80 ԱՄՆ դոլար, իսկ օրական ծախսերը՝ 112.20 ԱՄՆ դոլար: Նրանց հաջորդում են սպորտային և մշակութային միջոցառումներին մասնակցելու նախատակով այցելած գրոսաշրջիկները՝ յուրաքանչյուր ուղևորության վրա ծախսելով միջինում 1,158.60 ԱՄՆ դոլար և 79.80 ԱՄՆ դոլար օրական:

ՄԵԿ ուղևորությանն ընկնող ծախսերի հաջորդ ամենաբարձր դրույքաչափն ընկնում է կրթության նախատակով ժամանած գրոսաշրջիկներին՝ 1,181.70 ԱՄՆ դոլար, ինչևէ, օրական ծախսերի առումով նրանք ունեն ամենացածր դրույքաչափը՝ օրական ընդամենը 16.20 ԱՄՆ դոլար: Սա պայմանավորված է նրանց այցելության շատ երկար ժամանակահատվածով (73 օր): Բացի այդ, հարկ է նաև հիշել, որ այս այցելուներն ավելի երիտասարդ են և ավելի քիչ կայուն եկամուտ ունեն, եթե ընդհանրապես ունեն այն:

Գործնական նախատակով ժամանող գրոսաշրջիկները Հայաստանում ծախսում են օրական 71.80 ԱՄՆ դոլար, իսկ ընկերներին և հարազատներին այցելող գրոսաշրջիկների օրական ծախսերը ցածր են՝ մոտ 23.40 ԱՄՆ դոլար, նրանց է ընկնում յուրաքանչյուր ուղևորությանն ընկնող ծախսերի ամենացածր դրույքաչափը՝ ընդամենը 582.30 ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 23. Ծախսերի համեմատությունը հանգստի նպատակով ժամանածների խմբում (ԱՄՆ դոլար)



Հանգստի/ժամանցի նպատակով ձանապարհորդող այցելուները միակ խումբն են, որտեղ այցելությունները բաժանվում են տուր փաթեթով և ինքնուրույն կազմակերպված ուղևորությունների, սակայն դրանց միջև առկա տարբերություններն էական չեն: Տուր փաթեթով ձանապարհորդող գրոսաշրջիկները ծախսում են 2,350.90 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր ուղևորության համար, ինչը 1,260.10 ԱՄՆ դոլարով գերազանցում է ուղևորությունը սեփական ուժերով կազմակերպած հանգստի նպատակով ժամանած գրոսաշրջիկների ծախսերը: Նույնը վերաբերվում է նաև օրական ծախսերին, երբ տուր փաթեթով հանգստի նպատակով ձանապարհորդող գրոսաշրջիկները ծախսում են օրական 224.30 ԱՄՆ դոլար ուղևորություն ինքնուրույն կազմակերպող գրոսաշրջիկների օրական 92.70 ԱՄՆ դոլարի դիմաց:

Հայկական ծագում ունեցողների խմբում ծախսերն ավելի փոքր են: Չնայած սպորտային կամ մշակութային միջոցառումներին մասնակցող գրոսաշրջիկների մեկ ուղևորությանն ընկնող ընդամենը ծախսերն ամենամեծն են (1,337.20 ԱՄՆ դոլար), այնուհանդերձ այս կատեգորիայի օրական միջին ծախսերը, միևնույն է, ավելի ցածր են միջին գրոսաշրջիկի ծախսերից: Մյուս խմբերում նկատվում է միևնույն ծախսերի բաժանումը:

4.4.2. Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպած գրոսաշրջիկների միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների²


Աղյուսակ 19. Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպած գրոսաշրջիկների միջին ծախսերն ըստ շուկաների (%)

Ծախսերի առարկան	ՀՆ	Կանադա	Ճապոնիա	Ռուսաստան	Կիրառական	Ար Մար	Հունաստան	Հունարա�ն	Հունական	Մեծ Բրիտանիա	Ֆրանսիա	Գերմանիա	Իտալիա	Արգենտինա	Հուն	Հուն	Ար Մար	Շուկաների միջին
Միջազգային տրանսպորտ	46.8	52.1	53.1	33.2	21.6	31.8	35.2	39.2	42.6	36.4	39.5	40.6	24.4	27.5	26.7	42.1	36.1	
Կացարան	15.5	16.0	21.9	8.8	21.0	9.6	12.1	23.3	23.9	19.8	21.5	19.5	22.0	24.8	21.9	18.3	14.5	
Ուստորամներ և բարեր	7.1	5.8	4.8	7.9	14.2	10.4	7.2	6.9	7.3	8.6	7.1	7.3	6.4	11.7	8.9	8.6	8.2	

² Ի տարբերություն նախորդ մասում ներկայացված տվյալների, այս մասում ծախսերի տվյալների կրճատում չի կատարվել:

Ծախսերի առարկան	ԱՄ	Կանադա	Ճապոնիա	Ռուսաստան	Վրաստան	Այլ Արև.	Հյուսաստան	Հունգարիա	ՄԵԺ Բրիտանիա	Ֆրանսիա	Գերմանիա	Կրամակերպության Եվրոպեա	Լիբանաս	Սիրիա	Իրան	Բուրյան Արև. Եվրոպեա	Ընդամենը միջին
Կազմակերպված սոութեր	2.1	4.5	2.2	1.7	2.9	1.7	5.7	3.8	2.0	3.6	3.3	2.6	10.6	3.7	2.6	3.0	2.4
Տրանսպորտ Հայաստանի մերսում	1.7	0.8	1.6	2.6	3.9	1.8	2.7	2.1	1.6	2.5	2.7	2.1	5.4	4.2	4.5	2.3	2.5
Հուշանվերներ և տնայնագործական իրեր	5.3	3.7	5.4	6.1	9.9	9.6	10.9	4.4	4.7	6.1	6.2	5.8	7.0	6.9	7.1	6.1	6.3
Այլ ծախսեր	21.4	17.1	10.9	39.7	26.4	35.0	26.3	20.4	17.8	23.0	19.6	22.2	24.3	21.2	28.2	19.6	30.0
Ընդամենը միջին ծախսերը (ԱՄՆ դոլար)	2511.6	2640.2	2361	1175.0	124.4	1235.6	1245.1	2205.3	1746.2	1896.8	1718.4	1286.3	1531.0	1254.8	668.4	1862.6	985.8

Գծապատկեր 24. Ուղևորությունն իմքնուրույն կազմակերպված գրոսաշրջիկների միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների ըստ շուկաների (%)



Խարնաշվորթից խուսափելու համար այս բաժնում անհրաժեշտ է հստակեցնել, որ այս տոկոսային հարաբերությունները ներկայացնում են ավելի շուտ ծախսերի համամասնությունը, ոչ թե բացարձակ թվեր: Այդ իսկ պատճառով, չնայած նրան, որ շուկայի որոշ սեգմենտների համար ներկայացված համամասնություններն ավելի բարձր են, այնուհանդերձ, փաստացի ծախսերը կարող են լինել ավելի ցածր, քան մյուս սեգմենտներինը:

Բոլոր այցելուների մոտ միջազգային տրանսպորտին ընկնում է ծախսերի միջինում 36.1%-ը: Տրամաբանական է, որ միջազգային տրանսպորտի վրա կատարվող ծախսերն ամենամեծն են Հայաստանից հետո գտնվող Երկրների դեպքում (Ճապոնիա՝ 53.1%, Կանադա՝ 52.1% և ԱՄՆ՝ 46.8%), մինչդեռ ավելի մոտ տեղակայված Երկրների ծախսերն այս կատեգորիայում ավելի քիչ են (Վրաստան՝ 21.6%, Լիբանան՝ 24.4%, Իրան՝ 26.7%):

Ծախսերի հաջորդ ամենամեծ դրույքաչափը գրացվել է «այլ ծախսեր» կատեգորիայի համար, որտեղ Ռուսաստանը այլ ծախսեր կատեգորիայում ունի ծախսերի ամենամեծ մասնաբաժննը մյուս կատեգորիաների համեմատ՝ 39.7%, որին հաջորդում են ԱՊՀ երկրները՝ 35%-ով:

Կացարանի վրա կատարվող ծախսերը միջինում կազմում են 14.1% բոլոր երկրների համար, ինչև այս կատեգորիայում առավելագույն ծախսեր են գրանցվել Սիրիայի համար՝ 24.8%: Սա, հավանաբար, պայմանավորված է այն փաստով, որ սիրիացիները կազմում են Հայաստանում սովորող օտարերկյա ուսանողների ամենամեծ խումբը, և նրանց այցելության երկար տևողությունը նշանակում է, որ նրանք ավելի շատ են ծախսում կացարանի վրա: Միջին երկելքի երկրներից, Արևմտյան Եվրոպայի երկրներից, Ճապոնիայից և Վրաստանից ժամանող գրոսաշրջիկները կացարանի վրա ծախսում են իրենց բյուջեի 19%-ը, մինչդեռ Ռուսաստանից և այլ ԱՊՀ երկրներից ժամանածներն ամենաքիչն են ծախսում կացարանի վրա՝ 8.8% և 9.6% համապատասխանաբար: Հյուսիսային Ամերիկայի գրոսաշրջիկները կացարանի վրա ծախսում են իրենց գումարի 16%-ը:

Նշանակալի ծախսեր են գրանցվել ռեստորանների և բարերի կատեգորիայի համար Վրաստանից (14.2%), Սիրիայից (11.7%) և այլ ԱՊՀ երկրներից ժամանած գրոսաշրջիկների դեպքում, իսկ ռեստորանների վրա ամենաքիչ ծախսերը կատարվել են ճապոնացի գրոսաշրջիկների կողմից՝ 4.8%: Ռեստորանների վրա կատարված ծախսերի դրույքաչափը, սովորաբար, համապատասխանում է յուրաքանչյուր երկրից ժամանածների կողմից Հայաստանում անցկացրած միջին ժամանակահատվածին:

Լիբանանցի գրոսաշրջիկները, ակնհայտորեն, ամենաշատն են հակված գումարներ ծախսելու տեսարժան վայրերի կազմակերպված էքսկուրսիաների վրա՝ հատկացնելով այս կատեգորիային իրենց գումարի 10.1%-ը: Նրանց հաջորդում են հույները՝ 5.7%-ով և կանադացիները՝ 4.5%-ով: Կազմակերպված տուրերի վրա ամենաքիչ ծախսերը կատարվել են Ռուսաստանից և ԱՊՀ այլ երկրներից ժամանած գրոսաշրջիկների կողմից՝ իրենց գումարի 1.7%-ը: Հետաքրքրական է այն, որ ամերիկացիների, բրիտանացիների և ճապոնացիների ծախսերը նույնական է այս կատեգորիայում՝ կազմելով 2.1%, 2.0% և 2.2% համապատասխանաբար, ինչը հնարավոր է, պայմանավորված է նրանց կողմից տուր փաթեթներից ավելի շատ օգտվելու հանգամանքով:

Ներքին տրանսպորտային ծախսերն ամենամեծն են լիբանանցիների, սիրիացիների և իրանից ժամանած գրոսաշրջիկների համար, մինչդեռ Կանադայի, Ճապոնիայի և Մեծ Բրիտանիայի գրոսաշրջիկներն այնքան էլ հակված չեն ծախսեր կատարել այս տիպի տրանսպորտի վրա:


Հուշանվերների վրա կատարված ծախսերի ամենաբարձր դրույքաչափերն ընկնում են հույներին, վրացիներին և ԱՊՀ այլ երկրներից ժամանած գրոսաշրջիկներին, իսկ ամենացածրը՝ կանադացիներին, իտալացիներին և բրիտանացիներին:

Աղյուսակ 20. Ռուսությունն ինքնուրույն կազմակերպված գրոսաշրջիկների միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների ըստ այցելության նպատակի (%)

Ծախսերը	Գործնական/համաժողով	Աշխատանք	Կրթություն	Բուժում	Հանգստ և ժամանակ	Ակտիվ մասնակցություն սպորտային կամ մշակութային միջոցառումների	Այցելություն ընկերներին և հարազատներին	Այլ	Ընդամենը միջին
Միջազգային տրանսպորտ	38.1	35.3	16.9	26.2	35.8	38.5	36.6	36.5	36.1
Կացարան	26.5	25.9	23.0	12.0	24.3	20.9	5.2	8.7	14.5
Ռեստորաններ և բարեր	7.3	8.5	18.4	4.7	8.5	7.6	8.7	5.7	8.2

Ծախսերը	Գործնական/համաժողով	Աշխատանք	Կրթություն	Բուժում	Հանգիստ և ժամանց	Ակտիվ մասնակցություն սպորտային կամ մշակութային միջոցառումների	Այցելություն ընկերներին և հարազատներին	Այլ	Ընդամենը միջին
Կազմակերպված տուրեր	0.9	0.7	2.6	1.1	6.1	2.7	2.1	1.3	2.4
Տրանսպորտ Հայաստանի ներսում	2.2	3.4	6.2	2.7	2.9	1.6	2.6	1.6	2.5
Հուշանվերներ և տնայնագործական իրեր	4.0	4.5	3.9	3.5	6.9	5.8	7.6	6.0	6.3
Այլ ծախսեր	21.0	21.6	29.0	49.8	15.4	23.0	37.2	40.3	30.0

Գծապատկեր 25. Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպված գրոսաշրջիկների միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների ըստ այցելության նպատակի (%)



Իրենց գումարների ամենամեծ մասնաբաժինը միջազգային տրանսպորտի վրա ծախսող գրոսաշրջիկների խմբերն են հանգստի/ժամանցի նպատակով ժամանողների խումբը (35.8%), սպորտային և մշակութային միջոցառումներին մասնակցության նպատակով ժամանողների խումբը (38.5%), գործնական այցով ժամանողները (38.1%) և «այլ» կատեգորիային պատկանող գրոսաշրջիկների խումբը (36.5%):

Միջազգային տրանսպորտի վրա ամենաքիչ ծախսերը կատարում են կրթության նպատակով այցելողները, ովքեր իրենց ծախսերի ընդամենը 16.9%-ն են հատկացնում դրան, ինչներ, գրոսաշրջիկների այս խումբը նշանակալիորեն ավելի շատ է ծախսում ռեստորանների և բարերի, ինչպես նաև ներքին տրանսպորտի վրա մյուս խմբերի համեմատ՝ դրանց հատկացնելով իրենց բյուջեի 18.4%-ը և 6.2%-ը համապատասխանաբար: Այս անգամ ևս կարևոր է հիշել, որ կրթության նպատակով ժամանող գրոսաշրջիկները, իհմնականում,

Հայաստանին ավելի մոտ տեղակայված երկրներից են և ավելի շատ ժամանակ են անցկացնում Հայաստանում, ինչով էլ պայմանավորվում են այս տարբերությունները:

Հանգստի/ժամանցի, գործնական և աշխատանքի նպատակով ժամանող գրոսաշրջիկները ամենից շատ գումարներ ծախսում են իրենց կացարանի վրա՝ իրենց բյուջեի 24.3%, 26.5% և 25.9%-ը հաճապատասխանաբար, մինչդեռ ընկերներին և հարազատների այցելող գրոսաշրջիկների ծախսերն այս կատեգորիայում ամենացածրն են՝ 5.2%:

Բացի այդ, հանգստի նպատակով այցելող գրոսաշրջիկներն ամենաշատն են գումարներ ծախսում կազմակերպված տուրերի վրա (6.1%), ինչը զարմանալի չէ, սակայն հուշանվերների վրա կատարվող ծախսերի առումով (6.9%) նրանց գերազանցում են ընկերներին և հարազատներին այցելության եկած գրոսաշրջիկները, ուն ծախսերն այս կատեգորիայում կազմում են 7.6%:

Հայկական ծագումով գրոսաշրջիկների խմբում ամենամեծ տարբերությունն այն է, որ նրանց մոտ գրեթե 6%-ով ցածր են կացարանի վրա ծախսվող գումարները, ինչը զարմանալի չէ, քանի որ հայկական ծագումով շատ գրոսաշրջիկներ հանգրվանում են ընկերների և հարազատների տանը:

5. ԺԱՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

5.1. Այցելուների նկարագիրը

5.1.1. Քաղաքացիության երկիրը

Աղյուսակ 21: Քաղաքացիության երկիրը

Երկիր	Հարցման մասնակիցների ընդամենը տոկոսը
Հայաստան	97.0
Չեխիայի Հանրապետություն	0.1
Ֆրանսիա	0.1
Վրաստան	0.3
Գերմանիա	0.1
Պարսկաստան	0.3
Ռուսաստանի Դաշնություն	1.5
Սիրիայի Արաբական Հանրապետություն	0.1
Ուկրաինա	0.1
Մեծ Բրիտանիա	0.1
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	0.1

Ժամանումների հետազոտությունն իրականացվել է Հայաստանի բնակիչների միջազգային ուղևորությունների վարքագիծն ուսումնասիրելու նպատակով: Այդ իսկ պատճառով էլ զարմանալի չէ, որ հարցմանը մասնակցած Հայաստանի բնակիչների 97%-ն ունի Հայաստանի քաղաքացիություն: Հաջորդ խոչը խումբը ռուսներն են՝ 1.5%: 0.1% կամ ավելի տոկոսային հարաբերությունն ընկնում է Չեխիայի Հանրապետությանը, Ֆրանսիային, Վրաստանին, Գերմանիային, Պարսկաստանին, Սիրիային, Ուկրաինային, Մեծ Բրիտանիային և ԱՄՆ-ին: Այլ երկրների համար նոյնպես ստացվել են որոշակի թվեր, որոնց դրույքաչափը, սակայն, պատասխանողների 0.1%-ից փոքր է:


5.1.2. Այցելության երկիրը

Աղյուսակ 22: Արտերկրում այցելվող հիմնական երկիրը³

Երկիր	Հարցման մասնակիցների ընդամենը տոկոսը
ԱՄՆ	1.0
Կանադա	0.1
Արգենտինա	0.0
Ճապոնիա	0.1
Ռուսաստան	44.9
Վրաստան	24.7
ԱՊՀ այլ երկրներ	4.0
Հունաստան	1.6
Իտալիա	0.5
Մեծ Բրիտանիա	1.1
Ֆրանսիա	1.9
Գերմանիա	1.5
Արևմտյան Եվրոպայի այլ երկրներ	1.2
Լիբանան	0.0
Սիրիա	1.0
Պարսկաստան	5.9
Բոլոր այլ երկրներ	10.4

Արտասահման ճանապարհորդող հայերի համար այցելության հիմնական երկրներն են Ռուսաստանը և Վրաստանը (44.9% և 24.7% համապատասխանաբար): Պարսկաստանը և ԱՊՀ այլ երկրները նույնպես ունեն այցելուների բավականին նշանակալի քանակ՝ կազմելով համապատասխանաբար 5.9% և 4%: Մյուս բոլոր երկրների ցուցանիշները 2%-ից ցածր են:

Գծապատկեր 26: Այցելության երկիրն ըստ այցելության նպատակի (%)



³ Մգեցված երկրները նրանք են, որոնց դեպքում գրուսաշրջիկների բացարձակ քանակը սահմանափակ է, և այդ իսկ պատճառով՝ ոչ ներկայացուցական

Ըստ այցելության նպատակի բաժանելիս տեսնում ենք, որ Ողուսատան այցելողներն առաջատար են բոլոր կատեգորիաներում՝ ներկայացնելով 28-82%, բացառությամբ «այլ» կատեգորիայի, որտեղ մեծամասնությունը են կազմել Վրաստան այցելողները՝ 41%: Վրաստան այցելող գրոսաշրջիկները նաև երկրորդ տեղն են զբաղեցնում յուրաքանչյուր երկրորդ կատեգորիայում, բացառությամբ աշխատանքի, որի դեպքում Ողուսատանից հետո ամենաբարձր դրույքաչափն ընկնում է Պարսկաստան այցելողներին՝ 15.8%, և կրթության ու մշակութային միջոցառումների, որոնց պարագայում «բոլոր այլ երկրներ» այցելողները հաջորդ ամենամեծ խումբն են կազմում:


Բացի այդ, Հայաստանի բնակիչները կրթության նպատակներով ամենից հաճախ մեկնում են ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա և Արևմտյան Եվրոպայի «այլ երկրներ»: Սպորտային ու մշակութային միջոցառումների կամ հանգստի/ժամանցի նպատակով կատարվող ուղևորությունների ամենամեծ դրույքաչափն ընկնում է Ֆրանսիային:

5.1.3. Տարիքը և սեռը


Աղյուսակ 23: Տարիքը և սեռը՝ ըստ այցելության նպատակի (%)

Տարիքը և սեռը	Գործնական/Համաժողով	Աշխատանք	Կրթություն	Բուժում	Հանգստը և ժամանց	Սպորտային կամ մշակութային միջոցառումներին ակտիվ մասնակցություն	Ընկերներին և հարազատների այցելություն	Այլ	Ընդամենը միջին
Տղանարդիկ	67.0	85.2	45.3	50.5	52.0	60.3	40.2	50.4	57.2
Կանայք	33.0	14.8	54.7	49.5	48.0	39.7	59.8	49.6	42.8
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100
17 կամ ավելի երիտասարդ	0.2	0	5.4	2.3	3.1	8.5	3.1	0.9	1.8
18 – 35	28.4	26.4	80.4	19.6	54.3	52.8	29.6	25.6	32.5
36 – 55	65.0	68.9	14.2	47.7	38.2	34.7	46.1	59.2	54.0
56 և ավելի	6.3	4.5	0	30.4	4.4	4.0	21.2	14.3	11.6
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100
Միջին տարիքը	40.5	40.6	28.1	45.1	34.4	33.0	41.6	42.0	40.0

Գծապատկեր 27: Սեռերի համամասնությունը (%)



Գծապատկեր 28: Միջին տարիքը (%)



Ընդհանուր առնամբ տղամարդիկ կազմում են հայ գրոսաշրջիկների մեծամասնությունը՝ ներկայացնելով 57.2%: Սեռերի համանանության ամենամեծ տարրերությունը գրանցվել է աշխատանքի նպատակով ճանփորդողների մոտ, որտեղ տղամարդիկ կազմում են 85.2%: Կանայք մեծամասնություն են կազմում միայն ընկերներին և հարազատներին այցելության (59.8%) և կրթության նպատակով մեկնողների խմբում (54.7%):

Ճամփորդողների մեծամասնությունը պատկանում էն 36-55 տարիքային խմբին և կազմում էն զբոսաշրջիկների ընդհանուր թվի 54%-ը: Տարիքային այս խումբը մեծամասնություն է կազմում հատկապես բիզնեսի (65%) և աշխատանքի (68.9%) նպատակներով ճամփորդողների մեջ, ինչպես նաև «այլ» նպատակներով ճանապարհորդողների մեջ (59.2%): 18-35 տարեկանները մեծամասնություն են կազմում կրթության նպատակով ճանապարհորդողների թվում (80.4%), ինչպես նաև հանգստի/ժամանցի (54.3%) և սպորտային ու մշակութային միջոցառումների կատեգորիաներում (52.8%): Հասկանալի պատճառներով 55 և ավելի տարիքային խմբին պատկանող այցելուները մեծամասնություն են կազմում բուժման նպատակով ճամփորդողների խմբում (30.4%):

5.2. Ծամփորդական վարքագծի օրինակներ

5.2.1. Ուղևորության կազմակերպումը

Աղյուսակ 24. Ուղևորության կազմակերպումն ըստ այցելության երկրի (%)

Ուղևորության կազմակերպումը	ԱՌ	Կաօքառ աղաժանա	Աղգճակինա ճամփա	Ուղևորության կազմակերպումը	Արդարացներ կազմակերպումը	Հոգածանալ հաջողակացներ	Հոգածանալ հաջողակացներ	Սեֆ Բիդուամիա գովազնություն	Ֆորմանիա գովազնություն	Գերանիա գովազնություն	Կրամական գովազնություն	Իրավասարան գովազնություն	Պարագայության գովազնություն	Դաշտավայրի գովազնություն				
Տուր օպերատոր	2.0	0	0	0	0.7	1	1.8	15.5	18.4	4.6	7.4	2.6	5.9	0	1.1	0.7	11.5	2.5
Ինքնուրույն/կազ- մակերպության կողմից	98.0	100.0	100.0	100.0	99.3	99.2	98.2	84.5	81.6	95.4	92.6	97.4	94.1	100.0	98.9	99.3	88.5	97.5

Պատասխանողների մեծամասնությունը (97.5%) իրենց ձանկորդությունը կազմակերպելու համար չեն օգտվել տուր օպերատորների ծառայություններից, այլ ինքնուրույն են կազմակերպել ուղևորությունը կամ այն իրնեց համար կազմակերպել է իրենց ընկերությունը: Տուր օպերատորների ծառայություններից օգտված զբոսաշրջիկների մեծամասնությունն այցելել են Իտալիան (18.4%) կամ Հունաստանը (15.5%):

Տրամադրանական է, որ ուղևորության այլ նպատակներով ձանապարհորդող գրոսաշրջիկների մոտ տուրօպերատորների ծառայություններից օգտվելու դրույքաչափը մեծ չէ, մինչդեռ հանգստի նպատակով մեկնողների ընդամենը 20.4%-ն է դիմել տուրօպերատորներին հրեց ուղևորությունը կազմակերպելու համար:

5.2.2. Կացարան

Աղյուսակ 25. Կացարանն ըստ այցելության նպատակի (մեկ գրուաշրջիկի հաշվով յուրաքանչյուր տիպի կացարանում անցկացված գիշերների միջին քանակը)

Կացարանի ընտրությունը	Գործ- նական/ Համա- ժողով	Աշխա- տանք	Կրթու- թյուն	Բու- ժում	Հան- գիստ և ժա- մանց	Սպորտային կամ մշակութային միջոցառումներին ակտիվ մասնակ- ցություն	Ընկերություն և հարա- զատների այցելություն	Այլ	Ընդա- մենը մի- ջին
Հյուրանոց	10.2	9.0	22.6	17.4	12.7	12.3	7.1	9.4	10.9
Վարձու բնա- կարան	30.3	176.8	91.8	96.6	21.5	35.8	105.2	93.4	114.8

Կացարանի ընտրությունը	Գործնական/Համաժողով	Աշխատանք	Կրթություն	Բուժում	Հանգստ և ժամանց	Սպորտային կամ մշակութային միջոցառումներին ակտիվ մասնակցություն	Ընկերների և հարազատների այցելություն	Այլ	Ընդամենը միջին
B&B / հոսքել	9.9	7.5	175.3	28	21.3	30.0	9.5	7.4	13.1
Ընկերոջ / հարազատի տուն	18.9	139.3	128.0	74.0	48.9	31.7	42.6	26.5	46.8
Այլ	10.1	146.2	150.2	43.6	23.8	25.8	14.7	45.2	61.7
ՄԵԿ գբուստոցիկ հաշվով գիշերների միջին քանակը	14.1	133.2	117.9	63.2	26.8	18.3	41.9	30.3	47.0

Ինչպես և կարող էր ակնկալվել, աշխատանքի և կրթության նպատակներով ձամփորդողները գիշերների մեջ մասն անց են կացրել երկրից դուրս, միջինում համապատասխանաբար 133.2 և 117.9 գիշեր, միջնդեռ բիզնեսի և համաժողովի նպատակներով ձամփորդողներն ամենակարծ այցելությունն են ունեցել՝ ընդամենը 14.1 գիշեր:

Յուրաքանչյուր առանձին տիպի կացարանում անցկացրած ամենաերկար ժամանակն ընկնում է վարձակալվող բնակարաններին, որի դեպքում գիշերների միջին քանակը կազմում է 114.8: Այնուամենայնիվ, կարևոր է հիշել, որ այս թիվը մի փոքր աղավաղվել է, քանի որ աշխատանքի, կրթության, առողջության բուժման և ընկերներին ու բարեկամներին այցելելու նպատակներով ձամփորդողներն ավելի երկար ժամանակահատված են անցկացնում, այդ իսկ պատճառով էլ ավելի հատկված են ապրել վարձու բնակարաններում:


Վարձու բնակարաններից հետո գիշերների միջին քանակի ամենաբարձր ցուցանիշն ընկնում է «այլ» տիպի կացարաններին՝ 62.1 գիշեր, որին հաջորդում է ընկերների և բարեկամների տանը պատավանան՝ 46.8 գիշեր: Հյուրանոցներին ընկնում է ամենակարծ ժամանակահատվածը՝ միջինում ընդամենը 11 գիշեր:

5.2.3. Այցելության տևողությունը

Աղյուսակ 21: Այցելության տևողությունն ըստ այցելության երկրի (%)


Այցելության տևողությունը	Այլ	Կամուրջ	Արգելված	Ճապանիա	Ուսումնական	Վրաստական	Արևադարձական	Երևանի երկանք	Հովհաննես	Ֆրանսիա	Արևադարձական	Կիրանա	Միջազգային	Հարավային Ասիա	Հարավային Ասիա	Հարավային Ասիա	Հարավային Ասիա	
1-3 գիշեր	0	0	0	0	1.5	49.4	1.8	0.6	4.1	2.8	0.5	2.6	1.7	0	0	45.7	6.0	16.4
4-7 գիշեր	4.9	0	0	0	7.5	26.6	13.9	11.0	16.3	24.1	28.0	19.7	17.8	25.0	48.4	28.2	38.9	18.3
8-14 գիշեր	11.8	0	0	18.2	12.2	14.3	11.8	23.9	40.8	25.9	28.6	28.3	16.9	50.0	15.8	14.4	23.0	15.1
15-21 գիշեր	9.8	20.0	0	27.3	9.2	4.6	13.6	11.0	12.2	12.0	13.8	10.5	12.7	0	10.5	3.6	8.6	8.1
